





ՀՅԴ Պատօնարելք



**Delegates to the 1907 Stuttgart Congress.**



ԱՐԵՎԱԿ




Հունիս N 6 (1609)

2009

ՈՐԾՎԿ

ՀՅԴ Պատօնաքեցր





**“Դրոշակ”**

ամենամսյա պաշտոնաթերթ  
Հայ Քեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ ՀՅԴ

Գլխավոր խմբագիր՝  
Ռուբեն Դրոշակյան

Խմբագիր՝ Կ. Խանլարյան  
Համակարգչային շարվածքը՝  
Ս. Խաչատրյանի  
Զեւավորումը՝ Մ. Դրոշակյանի

Ոճը՝ Ս. Փարթամյանի

Գրանցման վկայական 897

Երևան, 375010, Մհեր Մկրտչյան 12/1  
Հեռ. 521 876  
Էլ. փոստ. droshak@arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

“Droshak” monthly,  
ARF dashnaksoutiun publication

Editor-in-Chief: Rouben Hovsepian

12| 1 Mher Mkrtchian, Yerevan, 375010  
Tel. 521 876  
e.mail:droshak@arf.am

**Խմբագրական**

Լիարժեք այլընթանիք

2

**Վլոր սեղան**

Հայաստանի և Թուրքիայի միջև ձանալարհների

վերաբացման առևտասնեսական հիմնախնդիրները

4

**Տեսական**

Ազգայնութիւն թէ Ազգայնականութիւն

15

**Պատմական**

ՀՅ Դաւանակցության մուսքը Սոցիալիստական

ինսերնացիոնալ. Ծոնակարդի միջազգային

սոցիալիստական համաժողովը

24

**Տարածաւութան**

Ճշմարտությունը Նորագենի եկեղեցու

հիմնախնդրի մասին

32

**Նյութեր թուրք դատմարանների համար**

Վանը հին ու նոր կոնուրածների միջև

40

**Ուեղիկի**

Այս դասը, բարեկամներս, ե՞րբ ենք սովորելու

42

**«Դրոշակ»-ը 100 տարի առաջ**

Արքուն

45


**Նոր գրեր**

«Եռաբլուր»

**Պատկերասրահ**

Նինա Հայ-Արտյան

48



# Լիարժեք այլընտրան

**Ք**աղաքական կոալիցիայից Դաշնակցութեան դուս գալու մասին ՀՅԴ Գերազոյն Մարմնի հրամարակած յայտարարութեան մէջ (2009 թ. ապրիլի 27), ընդհանուր քննուումներով, ամրագրուել է ընդդիմական ուժի մեր վարչագիծը, այն է՝ Հայաստանի քաղաքական դաշտում հանդէս գալ որդէս լիարժեք այլընտրան:

Լիարժեք այլընտրան լինելու քաղաքական կեցուածքը, ըստ էութեան, ենթադրում է, ՀՅԴ արժեքային համակարգի հիման վրայ ձեւակերպել ռազմավարական սկզբունքներ, մշակել համադատախան ոլատֆորմային դրոյթներ եւ ներկայացնել համակարգային փոփոխութիւնների քազմակողմանի դահանջներ:

Լիարժեք այլընտրան դառնալու դժուար եւ խիս դասախանակութեան գործընթացում, նախատեսելի է, որ Դաշնակցութեան քաղաքական բայլերը յաճախ կարող են չհամընկնել «ընդդիմութիւն» հասկացութեան հայաստանեան չափանիւններին: Օրինակ՝ իշխանափոխութեան հարցը: Դառնալ ընդդիմութիւն, առաւել եւս լիարժեք այլընտրան, նշանակում է դատարակամ լինել սանձնելու

լու իշխանութեան ամբողջական դատասխանատութիւնը: Այսանով էլ դարձ ու բնական է ընդդիմադիր ուժի քաղաքական ձգտումը: Սակայն, Հայաստանի քաղաքական միտքը իշխանափոխութիւնը դատկերացնում է լոկ գործադիր իշխանութեան, նախագահի կամ կառավարութեան հրաժարականով եւ կամ էլ խորհրդարանական վաղաժամկէտ ընտրութիւններով: Իշխանափոխութեան այս եղանակները, փասօռէն, նոյնանում են քաղաքական յեղաւորում հասկացութեան հետ, որը դեւական կեանքում իրականանում է առտաֆին քաղաքական դայմանների կրոնկ փոփոխութեան կամ ներփին քաղաքական բնականոն կեանի խախտման հետեւանքով: Նման իրավիճակի առաջացումը չի բացառում նաև Հայաստանում, որի դէմքում, ի թիս քաղաքական միս ուժերի, Դաշնակցութիւնն էլ կը կատարի իր մարտավարական բայլերը՝ բարեյացող իշխանափոխութեան ուղղութեամբ: Ներկայում Հայաստանում այդպիսի իրավիճակ չկայ: Դաշնակցութիւնը, որդէս լիարժեք այլընտրանին ուժ, ձգտում եւ դայբարում է սահմանադրութեան նախատեսուած դայմաններով սանձնելու ամբողջական իշխանութեան

դեկը, որի համար, այս հանգրուանում, դեռեւ երեք սարի ժամանակ ունի:

Վեցնենի մեզանում տարածուած մէկ այլ թիւ ընկալում. բաղաբական միտքը, ընդդիմադիր կեցուած ասելով, հասկանում է գործադիր իշխանութեան ամէն մի բայլի մերժումը, սեւացումը նրա ամէն մի մօտեցման, եթէ անզամ դրամի ձիւս ու տեղին են: Իշխանութեան կողմից, փոխադարձաբար, ընդդիմութեան ամէն մի շարժ, ամէն մի խօսք որակում է որպէս հակառեւական, դաւաճանական: Դաւնակցութիւնը դայլարի դաւում չի գործել ու չի գործելու բոլցեւիկեան «ինչքան վաս, այնքան լաւ» մտակեցուածքով եւ տեաբար, դայլարելով նմանօրինակ կարծրատիպերի դէմ, սատարելու է բաղաբական դայլարի նոր մտակոյթի ձեւաւորմանը:

Մի տարօրինակ միֆ, մեր կարծիքով՝ սխալ կրեդո եւս ցըանառում է Հայաստանի բաղաբական ցըանակներում: Մեր երկրում, ուր նոյնիսկ գործադիր իշխանութիւնները յաճախ եղել եւ են բազմատար եւ բազմաբեւո, ուս մարդիկ, չգիտես ինչու, կարծում են, թէ ընդդիմութիւնը դէս է լինի բացարձակադէս միատար, միաւորուած եւ մինչեւ իսկ գաղափարական կուր կարգադահութեան ենթակայ: Ում գաղափարական համոզմունքները կամ բաղաբական հայեացքները համահունչ չեն ամենածայրայեղականին, ամենակծու հայենողին, նա, անտարակոյս, համարում է ընդդիմութիւնը դայթեցնելու նորատակով տեղադրուած «ական»: Այսպէս չէ, եւ այդդիսին դէս չէ լինի բաղաբական բնականն, առողջ եւ անկաւելի դաշը: Պատմականուն ընդդիմադիր ուժերի համընդիանուր ձակաս ստեղծուել է այն երկներում, ուր դպրձեալ իշխանափոխութիւնը համարուել է զլխաւոր օրակարգ: Իշխանութեան դէմ ինքնարեւաբար չի ձեւաւորում ընդդիմադիր ձակաս, եթէ, յատարակ, առձակատուած եւ բեւեռացուած չէ գաղափարախօսական դաշը: Պարզ է, որ գաղափարական ընդհանրութիւններ գոյութիւն չունեն ՀՅ Դաւնակցութեան եւ ՀԱԿ-ը զլխաւորող առանցքային ուժերի միջեւ:

Այնուամենայնի ելնելով բազմակարծութեան սկզբունքից եւ տարաբնոյք գաղափարների միաժամանակեայ գոյութեան իրաւունքից, համոզուած ենի, որ ՀՀԿ-ական դահանողական եւ ՀՀԸ-ական ծայրայեղական բեւեռներից հեռու դէս է ձեւաւորել ընդդիմութեան գաղափարական նոր բեւեռ, որի իրականացման համար, կը դահանջուեն չափազանց դժուարին բայ-

լեր: Սա էլ, անխուսափելիօրէն, լիարժեք այլընտրան դառնալու եւ բաղաբական լուրջ դայլար ծաւալելու անհրաժեշտ դայմաններից է:

Արդ փորձենի բնութագրել մեր դատկերացումները Դաւնակցութեան առաջիկայ գործունեութեան ասդարեզների, ուզմավարական նորատակների եւ բաղաբական դայլարի մասին՝ ըստ հետեւեալի:

**ա- Արտաքին բաղաբականութիւն.** աչալուր հետեւնականութեամբ, մշտական դէս է ուսադրութեան կիզակեցում դահել ՀՅ դիանագիտական կորուսի բայլերը՝ մեզ յուզող բոլոր ոլորտներում, մանաւանդ հայրութական եւ հայ-ադրբեջանական յարաբերութիւններում: Եթէ գործընթացները բախուեն մեր դիտանկինց բնորոշուած ազգային եւ դետական շահերին, աղա դէս է հնարաւոր ամէն բան անել կասեցնելու դրամի, ընդհույզ մինչեւ գործադիր իշխանութեան հրաժարականի հարցի բարձրացում: Սա նշանակում է, որ Դաւնակցութիւնը, առաւել բափով, շարունակելու է արքուն դահակի եւ առողջ բնադրատոյի իր դիմամիկ կեցուածքը:

**բ- Ներքաղաբական դաշը.** մեր օրէնսդիր ռեսուրսով, բարոզական մեխանիզմով եւ բաղաբական որոշակի գործողութիւններով, ձգտել ընթական համակարգի առողջացմանը, դեմոկրատական օրէնքների համարմանը եւ կիրառմանը, բաղացիական հասարակութեան կայացմանը: Անհրաժեշտ է Դաւնակցութեան նախաձեռնութեամբ ՀՅ բաղաբական կեանքում սահմանել «կենտրոն-ձախ» գաղափարական դաշը, տեաբար փորձելով համախմբել, մէկ կողմից, չափաւոր ազատական հոսանքները՝ (ՀՌԱԿ, «Ժառանգութիւն», ԱԺՄ եւ այլն), իսկ միւս կողմից՝ սոցիալ-դեմոկրատական (ԴեմԿու), սոցիալիստական (ՀԱՍԿ) եւ կոմունիստական (ՀԿԿ) հոսանքները:

**գ- Սոցիալ-սնտեսական բնագաւառ.** առկայ իրավիճակում վեր հանել սոցիալական կարեւուազոյն հարցերը (արտադրույթան ոլորտ, հարկային համակարգ եւ այլն), գիտական հիմունքներով գնահատել կացութիւնը, մշակել բարեփոխման համալիր ծրագրեր եւ բարոզական մեխանիզմներով ներկայացնել լայն հանրութեան ուսադրութեանը: Զուգահեռաբար ձեւաւորել արհեստական միութիւններ եւ աջակցել արդէն գործողներին, արծարծել սոցիալական բնադրատոյին եւ կազմակերպել սոցիալական շարժումներ:

# Հայաստանի և Թուրքիայի միջև ճանադարհների վերաբացման առևտասնութեական հիմնախնդիրները

 ունիսի 23-ին ՀՅԴ Բյուրոյի «Քրիստոնոր Մի-  
ւայելյան» կենտրոնում  
ՀՅ Գաւակցության նախա-  
ձեռնությամբ տեղի ունեցակ  
«Հայաստանի և Թուրքիայի  
միջև ճանադարհների վերա-  
բացման առևտասնութեական  
հիմնախնդիրները» թեմայով  
բնարկում:

Քննարկմանը ներկա էին ՀՅԴ  
ներկայացուցիչներ, ՀՀԿ խմբակ-  
ցության ղեկավար Գալուս Սա-  
հակյանը, ԱԺ ֆինանսավարկա-  
յին և բյուջետային հարցերի մշտա-  
կան հանձնաժողովի նախագահ  
Գագիկ Մինասյանը, ՀՀԿ խմբակ-  
ցության անդամ Վարդան Այվազ-  
յանը, ԲՀԿ խմբակցության անդամ  
Վարդան Բոստանջյանը, «Ժառան-

գություն» խմբակցության ղե-  
կավար Արմեն Մարտիրոսյանը,  
Ֆինանսների նախկին նախա-  
րար Էդուարդ Սանդոյանը,  
Տնտեսագետներ և ուրիշներ:

ՀՅԴ Բյուրոյի անդամ, ՀՅԴ  
խմբակցության ղեկավար Վա-  
հան Հովհաննիսյանը բացման  
խոսքում նշեց, որ ուսումնասի-  
րության հիմքում բաղադրական  
ենթատեսական չկա, այն միայն  
նորատակ ունի դասասխանել  
հարցերին, թե Հայաստան-Թուր-  
քիա ցամաքային ձանադարի  
կամ ճանադարիների բացման  
ժամանակ առևտային, սոցիա-  
լական, Տնտեսական ինչ  
հետևանիներ կարող են լինել:  
Նրա խոսքով՝ «Փուլքության դի-  
վանագիտության» արդյունում  
արհեստականորեն ճանադար-  
ին բացման օրակարգ առաջա-  
ցակ, սակայն դա մեր օրակար-  
գը չէր, այլ Թուրքիայի, որով-  
հետև Թուրքիան է փակել ճանա-  
դարիը, և բացելն էլ նրա զործն  
է: Այնուամենայնիվ, մեր առջև  
խնդիր է դրված, թե եթե ճանա-  
դարիը բացվեց, մենք ի՞նչ  
խնդիրներ ենք ունենալու, և որ-  
քանո՞վ են Հայաստանում դաս-  
տաս դրա բացմանը թե՛ օրենս-  
դրութեն, թե՛ Տնտեսական բա-  
ղադրիչներով, և անհրաժեշտ է  
այս խնդիրը բնարկել առանց  
բաղադրական ենթատեսական բացման:

Քննարկվող հարցի առիրով  
ՀՅԴ ղեկույցը ներկայացրեց  
ՀՅԴ Բյուրոյի անդամ Գալիք  
Լոյյանը:

Հետխորհրդային շրջանում Հայաստան-Թուրքիա փոխհարաբերությունները սկսվեցին Հայաստանի անկախությունից անմիջապես հետո Թուրքիայի կողմից Հայաստանի պետության ճանաչմամբ, սակայն Թուրքիան տարբեր պատճառներով մերժեց Հայաստանի հետ պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Ավելին, 1993 թվականին Թուրքիան քաղաքական նկատառումներով փակեց Հայաստանի հետ իր սահմանները:

Հայ-քուրքական սահմանի վերաբերումը հատկապես վերջին միքանի տարիների ընթացքում գտնվել է քազմաքիլ տնտեսագետների ուշադրության կենտրոնում, ովքեր փորձել են գնահատել սահմանի վերաբացման ազդեցությունը մի շարք տնտեսական ցուցանիշների վրա: Նման ուսումնասիրություն առաջին անգամ իրականացվել է Պոլյակովի կողմից 2000 թվականին<sup>1</sup>, որը կիրառել է ձգողականության մոդել:

Հետագայում Ֆրեյնկմանը, Պոլյակովն ու Ռեվենկոն<sup>2</sup> կիրառել են առևտրի բացության և ձգողականության մոդելները՝ հայկական առևտրային հոսքերի և ՀՆԱ-ի վրա Թուրքիայի հետ փակ սահմանի ազդեցությունը գնահատելու համար: Առևտրի բացության մոդելի կիրառումից ստացված արդյունքները ցույց են տալիս, որ փակ սահմանը զգալի ազդեցություն է ունեցել արտահանումների և ՀՆԱ-ի վրա:



Տնտեսական քաղաքականության և իրավական հարցերի հայ-եվրոպական խորհրդատվական կենտրոնը (AEPLAC) կիրառել է հաշվարկելի ընդհանուր հավասարակշռության մոդել՝<sup>3</sup> սահմանի բացման ազդեցությունը ՀՆԱ-ի և առևտրի հոսքերի վրա գնահատելու համար: Ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ սահմանի բացումը միջնաժամկետ հեռանկարում կհանգեցնի արտահանման 17,7 %, ներմուծման 13,0 % և իրական ՀՆԱ-ի 2,7 % աճի:

Հայ-քուրքական սահմանի վերաբացման հետևանքով առևտրի հոսքերի ծավալների աճի վերաբերյալ գնահատական է տրվել նաև Թորոսյանի, Գանգիձեի և Բեյլորի<sup>4</sup> կողմից, համաձայն որոնց՝ Թուրքիայից Հայաստան ներմուծումները կածեն 50 %-ով, իսկ Հայաստանից Թուրքիա արտահանումները՝ 38 %-ով:

2006 թվականին հայ-քուրքական սահմանի վերաբացման խնդրին անդրադարձել է նաև Բաղրամյանը<sup>5</sup>, որն իր աշխատությունում կիրառում է նախորդ վերլուծություններից տարբերվող մոտեցում: Նա ենթադրում է, որ հայկական ու վրացական և քուրքական ու

իրանական սպառողները համապատասխանաբար ունեն նման նախապատվություններ: Այս ենթադրությունը հնարավորություն է տալիս գնահատել, թե ինչ կներմուծեն հայկական սպառողները Թուրքիայից և, նմանապես, ինչ կներմուծեն քուրքական սպառողները Հայաստանից: Ուսումնասիրության, արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի ընդհանուր ներմուծումները կավելանան 4 %-ով, իսկ ընդհանուր արտահանումները՝ 4-12 %-ով:

Այս աշխատանքի նպատակն է բացահայտել ու որակել սահմանի վերաբացման առևտրատնտեսական հիմնախնդիրները և սահմանել դրանց առնչությամբ Հայաստանի դիրքորոշման նախընտրելի ուղիները: Դիտարկվում են երկու երկրների տնտեսության հիմնական հատվածներն ու դրանց համեմատությունը, ինչպես նաև ներմուծումների, արտահանումների ու արտադրության վրա ազդող կարգավորումն ու դրանց համեմատությունը, և տրվում են բացահայտված հիմնախնդիրների շորջ եզրակացություններ ու առաջարկություններ: Տնտեսապես հարթականորեն ավելի մեծ ներուժ ունեցող երկրի հետ ապագա գործնկերությունը շահավետ դարձնելու համար անհրաժեշտ է՝ շուկայի մատչելիության առնչությամբ առնվազն հավասար պայմանների հաստատում, ներքին արտադրողների մրցունակության ու արդյունավետության բարձրացում և բա-

վարար խրախուսում և ներքին շուկայի պաշտպանության ուղղված օրենսդրության արդյունավետ կիրառում:

Ուսումնափրության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) քարտուղարության առևտրի քաղաքականության վերաբերյալ հաշվետվորյուններն ու անդամների պարտավորությունների փաստաթղթերը, Համաշխարհային բանկի WITS<sup>6</sup> և WDI<sup>7</sup> տվյալների բազաներից հավաքագրված տվյալները, Եվրոպական հանձնաժողովի աշխատանքային փաստաթղթերը, Հայաստանի և Թուրքիայի պետական կառավարման մարմինների հաշվետվորյունները, Economist Intelligence Unit հետազոտական և խորհրդատվական ընկերության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) և Տնտեսական քաղաքականության և իրավական հարցերի հայ-Եվրոպական խորհրդատվական կենտրոնի (AEPLAC) վերլուծական աշխատանքները և այլն:

### **Ներմուծումների վրա ազդող կարգավորում**

Թուրքիայի մաքսատուրքերի առավելագույն դրույքաչափերի ամրագրման ցածր մակարդակը (բոլոր ապրանքների 50 %) չամրագրված դրույքաչափերը կամայականորեն փոփոխելու հնարավորություն է տալիս: Սա ներկայում

**Հայաստանի համար  
վերը նշված բացահայտ  
ոչ բարենպաստ դիրքից  
լավագույն ելքը Թուրքիայի հետ առնվազն  
արդյունաբերական ապրանքների մասով ազատ  
առևտրի համաձայնագրի համար բանակցելն է:  
0-ական մաքսատուրքերի երկկողմ պարտավորությամբ՝ Հայաստանը կապահովագրվի Թուրքիայի սակագնային դրույքաչափերի հնարավոր փոփոխություններից և կստանա շուկայի հավասար մատչելիություն: Գյուղատնտեսական ապրանքների առնչությամբ՝ նշված համաձայնագրությունը պետք է ներառել գործող դրույքաչափերը ապագայում չբարձրացնելու երկկողմ պարտավորություն:**

գործող «օրենսդրական սակագների» կարգի հետ հնարավորություն է տալիս ընթացիկ խնդիրներ ունեցող և ամրագրման պարտավորություններից դուրս ցանկացած ճյուղի սակագնային լրացուցիչ պաշտպանություն տալ: Գործող ոչ արժեքային սակագների բարդ համակարգը կարող է արժեքային համարժեներով ստանձնած պարտավորությունների խախտման հնարավորություն տալ: Գործող դրույքաչափերի

պարզ միջինը շատ բարձր է՝ 10 %, և դրանց 1/5 մասը 10 %-ից բարձր է, ինչը վկայում է սակագնային պաշտպանության բարձր մակարդակի մասին: Որտեղ ավելի շատ է կարևորվում տեղական արտադրությունը, պաշտպանությունը բարձր է՝ անկախ ապրանքների մշակման աստիճանից: Գյուղատնտեսական ապրանքների սակագները ամրագրվել են շատ բարձր մակարդակի վրա, իսկ ոչ գյուղատնտեսական ապրանքների ապագա անհրաժեշտ պաշտպանությունը «ապահովագրվել է» դրանց մեծ մասի սակագների չամրագրմամբ: Մաքսային այլ հարկերն ու վճարները բավական բարդ են, և ամրողական կիրառման դեպքում՝ մաքսատուրքերը, հարկերն ու վճարները միասին որոշ ապրանքների համար կարող են գերազանցել ամրագրված սակագնային դրույքաչափը:

Հայաստանի համար վերը նշված բացահայտ ոչ բարենպաստ դիրքից լավագույն ելքը Թուրքիայի հետ առնվազն արդյունաբերական ապրանքների մասով ազատ առևտրի համաձայնագրի համար բանակցելն է: 0-ական մաքսատուրքերի երկկողմ պարտավորությամբ՝ Հայաստանը կապահովագրվի Թուրքիայի սակագնային դրույքաչափերի հնարավոր փոփոխություններից և կստանա շուկայի հավասար մատչելիություն: Գյուղատնտեսական ապրանքների առնչությամբ՝ նշված համաձայնագրությունը պետք է ներառել գործող դրույքաչափերը ապագայում

չբարձրացնելու երկկողմ պարտավորություն:

Թուրքիան առևտրի իր հիմնական գործընկերոջ՝ ԵՄ-ի հետ ունի մաքսային միության ռեժիմ, և նշված երկկողմ համեմատությունը Թուրքիայի հետ առևտրի համար միայն նվազագույն հիմքեր է տալիս, քանի որ նույնիսկ դրույքաչափերի հավասար պայմանների դեպքում հայկական արտահանողները քուրքական շուկայում կրախվեն ԵՄ արտահանողների արտոնյալ մրցակցությանը: Արդյունքում, Թուրքիայի հետ առնվազն արդյունաբերական ապրանքների ազատ առևտրի բանակցումը Հայաստանի համար կլինի ճիշտ ռազմավարություն:

Թուրքիայի հետ հետազա առևտրային գործընկերությունը պետք է նաև դիտարկվի ԵՄ-ի հետ նոր պարտավորությունների և ԵՄ-ի հետ Հայաստանի ձեռք բերած համաձայնությունների համատեքստում: Եթե Հայաստանը վայելում է ԵՄ-ի Արտոնությունների ընդհանրացված համակարգի (GSP+) շրջանակներում ԵՄ-ի համապատասխան շուկաների արտոնյալ մատչելիություն, ապա սկզբունքորեն դա պետք է տարածվի նաև Թուրքիայի շուկաների վրա: Սինչ ազատ առևտրի համաձայնեցումը կամ որպես դրան այլնտրանը՝ պետք է ձեռք բերվի Թուրքիայի հետ GSP+ արտոնյալ կարգավիճակ (Թուրքիայի արդյունաբերական ապրանքների մաքսատուրքերի գործող սակագների միջինը կնվազի 4,8 %-ից 2,8 %՝

**Շրջաններում արտադրական և/կամ արտահանման աջակցության նպատակով Թուրքիայի որոշ ներմուծումների նկատմամբ տուրքերի և հարկերի գիշումները կարող են հանգեցնել ներմուծող ոլորտներին տրվող հատուկ լրավճարների: Այդ գիշումները կարող են առնչվող ապրանքների դեպի Թուրքիա արտոնյալ արտահանման հնարավորություն հանդիսանալ: Հայաստանը պետք է դիտարկի Թուրքիայի այս աջակցության փորձը՝ շրջանների զարգացման ծրագրերի շրջանակներում առանձին ճյուղերի աջակցելու հնարավորության և շրջանների զարգացման անհրաժեշտության առումով: Թուրքիայում կիրառվող նշված հատուկ լրավճարներից ապագայում Հայաստանին հասցվող վճարի դեպքում՝ դրանք պետք է քննարկվեն երկողմ խորհրդակցությունների ժամանակ:**

Հայաստանում նոյն ապրանքների գործող սակագների միջինի 2,3 %-ի դիմաց):

Հայաստան-ԵՄ-Թուրքիա առևտրի խաչաձև հարաբերությունների այս ամբողջ համատեքստում կարևոր է ծագման կանոնների խնդիրը: ԵՄ-ի և Թուրքիայի հետ անհրաժեշտ է ծագման բարենպաստ կանոններ բանակցել՝ արտադրական գործնթացում ավելացված արժեքի կուտակման շահավետ տարրերակներով հնարավոր առավելացույն թվով ապրանքախմբեր ընդգրկելու և արտոնություններից կամ ազատ առևտրից առավելացույնս օգտվելու նպատակով: Թուրքիայի առևտրային տարրեր համաձայնագրերի ներքո ծագած արտոնյալ կանոնները հիմնված են մշակման աստիճանի կամ ավելացված արժեքի չափանիշների վրա՝ կուտակման հնարավորությամբ: Երկողմ կուտակումը կիրառվում է արտոնությունների ընդհանրացված համակարգի (GSP տրամադրող երկրի բաղադրություն) և երկողմ առևտրային համաձայնագրերի ներքո: Թուրքիան Համաեվրոպական ծագման կուտակման համակարգի մասնակից է, որը թույլ է տալիս ապրանք արտադրելու համար այդ գոտում ցանկացած երկրից նյութերի օգտագործում՝ պահպանելով արտոնյալ ծագումը: Համաեվրոպի երկրածովյան կուտակման համակարգը մեկ այլ օրինակ է: Գործընկեր երկրների միջև կուտակումը կարող է կիրառվել, եթե ծագ-

ման կարգավիճակի ստացման մեջ ներգրավված երկրների ու ներմուծող երկրի միջև կիրառելի է նմանատիպ ծագման կանոնների վրա հիմնված ազատ առևտության համաձայնագիր:

Թուրքիայի մաքսային ընթացակարգերը արդիականացվել են GUMSIS (մաքսային անվտանգության համակարգ, ոխսկերի վերլուծության գործընթաց և հակամաքսանենգության գործունեության փորձագիտություն) և BILGE (մաքսային բոլոր ընթացիկ ընթացակարգային պահանջների կատարման համար մշակված համակարգ) համակարգերի ներդրմամբ: Բոլոր մաքսային գործարքների 99,9 %-ը կատարվում են էլեկտրոնային ձևով: Մաքսային հայտարարագրման ձեռվաչափը համապատասխանեցվել է ԵՀ-ում օգտագործվող «մեկ վարչական փաստաթղթի» (SAD) հետ: EUR.1 կամ EUR.MED տեղաշարժի հավաստագիր է պահանջվում ոչ ԵՀ այն երկրներից ներմուծումների համար, որոնց հետ Թուրքիան ունի ազատ առևտության համաձայնագրեր: Ներմուծման մաքսային կետով անցումը տևում է առավելագույնը 24 ժամ (եթե բոլոր պահանջված փաստաթղթերը կարգին են), անկախ տրանսպորտի տեսակից:

Ծրջաններում արտադրական և/կամ արտահանման աջակցության նպատակով Թուրքիայի որոշ ներմուծումների նկատմամբ սուրբերի և հարկերի զիջումները կարող են հանգեցնել ներմուծող ոլորտներին տրվող հարգավիճակի ստացման մեջ:

Այդ զիջումները կարող են առնչվող ապրանքների դեպի Թուրքիա արտոնությալ արտահանման հնարավորություն հանդիսանալ: Հայաստանը պետք է դիտարկի Թուրքիայի այս աջակցության փորձը՝ շրջանների զարգացման ծրագրերի շրջանակներում առանձին ճյուղերի աջակցելու հնարավորության և շրջանների զարգացման անհրաժեշտության առումով: Թուրքիայում կիրառվող նշանակած հատուկ լրավճարներից ապագայում Հայաստանին հասցող վնասի դեպքում՝ դրանք պետք է քննարկվեն երկկողմ խորհրդակցությունների ժամանակ:

Թուրքիայի սակագնային և արտոնությալ սակագնային քվոտաների կիրառումը հակասում է ոչ սակագնային սահմանափակումներ չկիրառելու պահանջին: Գործող կարգը նաև դրանց անարդարացի բաշխման հնարավորություն է քողնում: Երկիրը կիրառում է նաև քանակական սահմանափակումներ: Թուրքիայի ներմուծման լիցենզավորման համակարգը ունի թափանցիկության խնդիրներ: Ազատ առևտության համաձայնագրի դեպքում այս խնդիրները նույնական կարող են մասամբ լուծվել: Այլապես, դրանք պետք է դիտարկվեն երկկողմ քանակցությունների ժամանակ՝ քվոտաների և քանակական սահմանափակումների հետ կապված առավելագույն բարենպաստ մոտեցում ստանալու, իսկ ներմուծման լիցենզավորման հետ կապված՝ ընթացակարգերի հնարավոր պարզեցման նպատակով:

Թուրքիան ունի լավ ձևավորված հակագնացման համակարգ, ինչը նախատեսում է ոչ շուկայական տնտեսություններից ներմուծումների առավել

բարդ ու ոչ բարենպաստ կանոններ և պետական մարմնի սեփական նախաձեռնությամբ դիտարկումներ: Թուրքիան ունի նաև լավ ձևավորված պաշտպանական միջոցների համակարգ: Կիրառվող միջոցները կարող են շուկայից դուրս բռնել ներմուծողին: Թուրքիայի հակագնացման համակարգի հետ կապված բանակցությունների ժամանակ պետք է քննարկել գնացման որևէ մտահոգությունների վաղ փուլում դիտարկման և Հայաստանը որպես շուկայական տնտեսություն ընդունելու հարցերը, իսկ պաշտպանական միջոցների հետ կապված՝ ներմուծումների որևէ մտահոգությունների վաղ փուլում դիտարկման հարցերը: Պետք է քանակցությունների ժամանակ քննարկել և համաձայնեցնել համատեղ խորհուրդ ստեղծելու անհրաժեշտությունը, ինչը հետագայում կիանդիպի՝ ընթացքում առաջացած բոլոր խնդիրների արագ քննարկման համար:

Թուրքիայի հակագնացման համակարգում ստեղծվել է ներմուծումներում անարդարացի մրցակցության գնահատման խորհուրդ, որը բաղկացած է Գյուղատնտեսության ու գյուղական հարցերի նախարարության, Արդյունաբերության ու առևտության նախարարության, Պետական պլանավորման կազմակերպության ենթաքարտուղարության, Մաքսային ենթաքարտուղարության, Թուրքիայի պալատների ու ապրանքահումքային բորսաների միության, Գյուղատնտեսության պալատների միության

ներկայացուցիչներից և Ներմուծումների գլխավոր տնօրինության համապատասխան վարչության պետից: Խորհուրդը մշակում է քոլոր որոշումներն ու առաջարկությունները և դրանք ներկայացնում է առևտրի հարցերով պատասխանատու պետնախարարի հաստատմանը: Գործում են վերջնական որոշված հակագնազգման 93 տուրքեր:

Հայաստանի կարևորագույն իրավունքներից է վճաս հասցնող ներմուծումներից ներքին արտադրողների պաշտպանությունը: Չնախատեսված առևտրային կարգավորմանն առնչվող տեխնիկական մեթոդները բավական բարդ են, իսկ Հայաստանի պատասխանատու մարմինները ունեն փորձի պակաս: Պետք է անհրաժեշտ բարձրության հասցեն համապատասխան մարմինների կարողությունները և առնչվող գործնթացների իրականացման մեխանիզմները՝ կապված հակագնազգման, լրացնական փոխհատուցման և պաշտպանական միջոցների հետ:

Հայաստանում ներմուծումների և արտահանումների տարբերությունը, որպես ՀՆԱ-ի մաս, մոտ 3 անգամ ավելի մեծ է, քան Թուրքիայում: Բացասական առևտրային հաշվեկշռի մեծացումը մտահոգություն է ընթացիկ հաշվի բացասական հաշվեկշռի դեպքում՝ կապված վերջինիս ֆինանսավորման հնարավոր բարդությունների հետ: Իրադրության բարդացման դեպքում կարող են սահմանափակվել ներմուծումները՝ օգտվելով այդ նպատակներով հատուկ մշակված ԱՀԿ վճարային հաշվեկշռի խնդիրների հետ կապված դրույթներից:

Հայաստանի կարևորագույն իրավունքներից է վճաս հասցնող ներմուծումներից ներքին արտադրողների պաշտպանությունը: Չնախատեսված առևտրային կարգավորմանն առնչվող տեխնիկական մեթոդները բավական բարդ են, իսկ Հայաստանի պատասխանատու մարմինները ունեն փորձի պակաս: Պետք է անհրաժեշտ բարձրության հասցեն համապատասխան մարմինների կարողությունները և առնչվող գործնթացների իրականացման մեխանիզմների արդյունավետությունը՝ կապված հակագնազգման, լրացնական փոխհատուցման և պաշտպանական միջոցների հետ:

Հայաստանում ներմուծումների և արտահանումների տարբերությունը, որպես ՀՆԱ-ի մաս, մոտ 3 անգամ ավելի մեծ է, քան Թուրքիայում: Բացասական առևտրային հաշվեկշռի մեծացումը մտահոգություն է ընթացիկ հաշվի բացասական հաշվեկշռի դեպքում՝ կապված վերջինիս ֆինանսավորման հնարավոր բարդությունների հետ: Իրադրության բարդացման դեպքում կարող են սահմանափակվել ներմուծումները՝ օգտվելով այդ նպատակներով հատուկ մշակված ԱՀԿ վճարային հաշվեկշռի խնդիրների հետ կապված դրույթներից:

Են սահմանափակվել ներմուծումները՝ օգտվելով այդ նպատակներով հատուկ մշակված ԱՀԿ վճարային հաշվեկշռի խնդիրների հետ կապված դրույթներից:

Թուրքիայի պետական գնումների համակարգը դառնում է ավելի պարզ ու արդյունավետ: Կան մրցույթների օտարերկրյա մասնակիցների հստակորեն սահմանված իրավասություններ և ընթացակարգերի թափանցիկություն: Թեև մրցույթների տեղական մասնակիցներին տրվող գնային արտոնությունը (15 %) կարող է ոչ բարենպաստ վիճակում թողնել մրցակիցներին՝ թուրքիայի մեծածավալ պետական հատվածի բազմատեսակ գնումները կարող են

մոտ հարևանությամբ դիտվել որպես լավ հնարավորություն:

Թուրքիան օգտագործում է փոխհամաձայնեցված առևտրի գործելակերպի երկու հիմնական տեսակ՝ բարտեր կամ փոխադարձ գնումներ և հատուցում: Առաջինը հիմնականում օգտագործվում է այն երկրների հետ, որոնք ունեն թերզարգացած բանկային համակարգ կամ արտարժույթի դժվարություններ: Հատուցումը համաձայնություն է, ըստ որի որևէ արարանքի կայուն փոխարկելի արտարժույթով գնման դեպքում մատակարարը կհատուցի հետագա-

**Թուրքիայում գոյություն ունեն 20 ազատ գոտիներ:** Ազատ գոտիներում գործող կազմակերպությունների համար կան մի շարք ֆինանսական խթաններ: Դրանք ներառում են մաքսատուրքերից ու նման այլ վճարներից, կորպորատիվ հարկից, եկամտահարկից և ավելացված արժեքի հարկից ազատումը, շահույթի փոխանցման նկատմամբ և արտարժութային գործառնությունների համար սահմանափակումների բացակայությունը: Ներդրողներն ազատ են նաև կառուցելու իրենց անձնական շենքերն ու շինությունները, չնայած որ ազատ գոտիներում կան գրասենյակային տարածքներ և պահեստներ, որոնք տրվում են վարձակալության՝ մատչելի գներով:

**Ազատ գոտիներում գործող կազմակերպությունների համար սահմանված արտոնությունները կարող են բավականին էժան դարձնել այդ կազմակերպությունների կողմից թողարկվող արտադրանքը, ինչը կարող է վտանգ ներկայացնել Հայաստանի համար՝ այդ գոտիներից դեպի Հայաստան էժան ապրանքների մեջ հոսքերի դեպքում: Մյուս կողմից, Հայաստանի համար լավ հնարավորություն կարելի է համարել այդ գոտիներում արտադրվող այն ապրանքները, որոնք չեն արտադրվում Հայաստանում:**

յում, օրինակ՝ կզնի վերջնական արտադրանքը, եթե մատակարարվել է տեխնոլոգիա, հումք կամ բաղադրամաս:

#### **Արտահանումների, արտադրության և առևտրի վրա ազդող կարգավորում**

Թուրքիայում գործում են բազմաթիվ միջոցներ, որոնց նպատակն է զարգացնել թուրքական արտադրության և արտահանման ներուժը: Նշված միջոցներից է ար-

տահանման ֆինանսավորումը, որն իրականացվում է թուրքիայի արտահանման վարկավորման բանկի (Թուրքական Էքսիմբանկի) կողմից: Բանկը 1987 թվականին հիմնադրված պետական հաստատություն է և թուրքիայի արտահանման վարկավորմամբ զբաղվող միակ պաշտոնական կառույցն է: Դրա նպատակներն են թուրքական արտահանումների ծավալի ավելացումը, արտահանման համար նոր շուկաների ձևավորումը, միջազգային առևտրում թուրքական արտահանող-

ների տեսակարար կշռի մեծացումը, ապրանքների և ծառայությունների արտահանման բազմազանումը և թուրքական արտահանողներին, ներդրողներին և արտասահմանյան գործընկերներին աջակցության ցուցաբերումը: Թուրք Էքսիմբանկի վարկային ծրագրերի միջոցով ֆինանսական աջակցություն և ստացել թուրքիայի տարեկան արտահանման ավելի քան 9 %-ը: Էքսիմբանկն աջակցում է արտահանողներին, արտահանման ուղղվածություն ունեցող արտադրողներին և արտասահմանյան ներդրողներին կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ արտահանման վարկավորման ծրագրերի միջոցով: Արտահանողների համար կարճաժամկետ ֆինանսական աջակցությունը հասնելի է նախառաքումային և հետառաքումային փուլերում և տրվում է 360 օրով՝ նոր թուրքական լիրայով, և 540 օրով՝ արտաքույրով: Առևտրային բանկերին բոլորավոր է գանձել տարեկան մինչև 1 % տարբերավճար (spread): ՆՄԼ-ով վարկերի համար, և 0,5 % տարբերավճար՝ արտաքույրով վարկերի համար: 2006 թվականին ընդհանուր վարկերի 67 %-ը տրվել է առևտրային բանկերի, և 33 %-ը՝ Էքսիմբանկի միջոցով: 2006 թվականի վերջի դրույթամբ, արտահանման կարճաժամկետ վարկերը կազմել էին Էքսիմբանկի ընդհանուր վարկերի 90 %-ը:

Էքսիմբանկը թուրքական արտահանողների, ներդրողների և

արտասահմանյան կապալառուների համար առաջարկում է նաև առևտրային և քաղաքական ռիսկերից ապահովագրման մի շարք ծրագրեր: Առևտրային ռիսկերն ապահովում են էքսիմբանկի սեփական միջոցներով, մինչդեռ քաղաքական ռիսկերը սկզբունքորեն ապահովում են կառավարության կողմից: Ապահովագրական վճարները տատանվում են 0,19 %-ից մինչև 4 %՝ առևտրային և քաղաքական ռիսկերի համար համատեղ, կամ 0,05 %-ից մինչև 4 %՝ միայն քաղաքական ռիսկերի համար:

Արտահանումների խթանման կենտրոնը, որ գործում է Արտաքին առևտրի ենթաքարտուղարության ներքո, արտահանման խթանման հիմնական պետական կազմակերպությունն է, որը որպես միջնորդ է հանդիսավորությունը օտարերկրյա ներմուծողների և քուրք արտահանողների միջև գործնական կապեր հաստատելու հարցում: Կենտրոնի գործունեությունը իրականացվում է հինգ հիմնական ուղղություններով՝ 1. հետազոտությունների համար վերապատրաստում, 2. առևտրային տեղեկատվություն, 3. հրապարակայնություն ու խթանում, 4. նախագծերի կառավարում և 5. միջազգային հարաբերություններ:

ՓՄՁ զարգացման պետական գործակալությունը աջակցում է ՓՄՁ-ներին հետևյալ հարցերում՝ ազգային և միջազգային ցուցահանդեսների մասնակցություն և

դեպի արտասահման գործարար այցեր (ֆինանսավորվում է ծախսերի մինչև 50 %-ը, ընդհուպ մինչև 10.000 ՆմԸ), արտահանման խթանման վարկեր և սեփական բրենդի ստեղծում: Գործակալությունը ՓՄՁ-ներին տրամադրում է նաև գործարար համապատասխանեցման մոդելներ: Սա մի մեխանիզմ է, որի միջոցով տեղական և արտասահմանյան ՓՄՁ-ները գրանցվում են տվյալների մեջ ընդհանուր քազում, և այն վարող որակավորված ընկերությունը գնահատում է այդ ՓՄՁ-ների միջև համագործակցության հնարավորությունները:

Թուրքիայում գոյություն ունեն 20 ազատ գոտիներ: Ազատ գոտիներում գործող կազմակերպությունների համար կան մի շարք ֆինանսական խթաններ: Դրանք ներառում են մաքսատորքերից ու նման այլ վճարներից, կորպորատիվ հարկից, եկամտահարկից և ավելացված արժեքի հարկից ազատումը, շահույթի փոխանցման նկատմամբ և արտարժութային գործառնությունների համար սահմանափակումների բացակայությունը: Ներդրողներն ազատ են նաև կառուցելու իրենց անձնական շենքերն ու շինությունները, չնայած որ ազատ գոտիներում կան գրասենյակային տարածքներ և պահեստներ, որոնք տրվում են վարձակալության՝ մատչելի գներով:

Ազատ գոտիներում գործող կազմակերպությունների համար սահմանափած արտոնությունները կարող են քավականին էժան դարձնել այդ կազմակերպությունների կողմից բողարկվող արտադրանքը, ինչը կարող է վտանգ ներկայացնել Հայաստանի համար՝

այդ գոտիներից դեպի Հայաստան էժան ապրանքների մեծ հոսքերի դեպքում: Մյուս կողմից, Հայաստանի համար լավ հնարավորություն կարելի է համարել այդ գոտիներում արտադրվող այն ապրանքները, որոնք չեն արտադրվում Հայաստանում:

Թուրքիայում ներդրումային խթաններ տրվում են Ներդրումների աջակցության ծրագրի (ՆԱԾ) շրջանակներում: ՆԱԾ-ի նպատակն է խրախուսել և ուղղորդել ներդրումները՝ երկրում զարգացման տարածաշրջանային անհամաշափությունները նվազեցնելու և զրադարձության նոր հնարավորություններ ստեղծելու համար՝ օգտագործելով ավելի բարձր ավելացված արժեքով տեխնոլոգիաներ: ՆԱԾ-ի շրջանակներում աջակցություն ստանալու նպատակով պոտենցիալ ներդրողները պետք է դիմեն ներդրումների խթանման սերտիֆիկատ ստանալու համար: ՆԱԾ-ով նախատեսված խթանները հետևյալն են. 1. սահմանված մաքսատորքերից ազատում ներմուծված այն մեքնաների և սարքավորումների նկատմամբ, որոնք ներդրումային ծրագրի մաս են կազմում, 2. ներմուծված և տեղական գնված մեքնաների ու սարքավորումների ԱԱՀ-ից ազատում, 3. վարկի տոկոսադրույթի որոշակի տոկոսային կետերի չափով աջակցություն և 4. ենկտրաներգիայի ծախսի աջակցություն՝ զրուաշրջության բնագավառում ներդրումների և հաստատու-

թյունների համար: Թուրքիան էլեկտրաէներգիայի 20-50 % ծախսերի չափով աջակցություն է տրամադրում այն ընկերություններին, որոնք հիմնադրվել են մեկ շնչի հաշվով 1500 \$ կամ ցածր ՀՆԱ ունեցող և սոցիալ-տնտեսական զարգացման բացասական ինդեքս ունեցող մարզերում:

Թուրքիան ունի պետական աջակցության ինը ծրագիր, որոնցից մի քանիսը միայն ՓՄՁ-ների համար են: Դրանք են Հետազոտական և զարգացման ծրագրերի, Շրջակա միջավայրի պաշտպանության միջոցառումների, Ցուցահանդեսներին մասնակցելու, Միջազգային մասնակցությամբ տեղական ցուցահանդեսներ կազմակերպելու, Շուկայի ուսումնասիրության, Արտասահմանում խանութներ գործարկելու, Արտարին ոլորտային առևտրի ընկերություններում զբաղվածությունը խթանելու, Մասնագիտական վերապարաստման և Թուրքական ապրանքանիշները խթանելու և բուրքական ապրանքների հեղինակությունը բարձրացնելու համար պետական աջակցություն:

Թուրքիան առաջարկում է նաև աջակցության հիմք լրացուցիչ ծրագրեր՝ տարածաշրջանների զարգացման նպատակով, կազմակերպված արդյունաբերական գոտիներին առաջարկվում են սուրսիական պարագաների արդյունաբերության և արտադրության մասնավորապես կապված արտահանման վարկավորման և ապահովագրության հետ, որի իրականացման համար պատախանատու կլինի Զարգացման հայկական գործակալությունը:

**Հայ-թուրքական սահմանի վերաբացումից և երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո Թուրքիայում հայկական դիվանագիտական ծառայությանը կից առևտրական ներկայացուցիչը կամ ներկայացուցչությունը կարող է մեծապես օգտակար լինել թե՛ հայկական արտահանողների և թե՛ Հայաստանի պետական մարմինների գործունեության համար:**

**Արտահանման խթանման գործում մեծապես կարևորվում է Զարգացման հայկական գործակալության արդյունավետ աշխատանքը: Անհրաժեշտ է մշակել արտահանման խթանման ծրագրեր՝ մասնավորապես կապված արտահանման վարկավորման և ապահովագրության հետ, որի իրականացման համար պատախանատու կլինի Զարգացման հայկական գործակալությունը:**

սուրսիական վարկեր: 2003-2006 թվականների ընթացքում տրված վարկերի ընդհանուր ծավալը կազմել էր 175,9 մլն. \$:

1965 թվականին մեկնարկած փոքրամասշտաբ արդյունաբերական շենքերի/շինությունների ծրագրով 2003-2006 թվականների ընթացքում տրամադրվել է 103,9 մլն. \$-ի չափով վարկ՝ ուղղված սանհիտարական պայմաններով ժամանակից արհեստանոցների կառուցմանը: 2006 թվականի վերջի դրությամբ կառուցվել էին 403 շենքեր/շինություններ և 88025 արհեստանոցներ:

ՓՄՁ-ների արդյունավետությունը բարձրացնելու և ընդհանուր արտադրության մեջ դրանց ծավալը մեծացնելու նպատակով ՓՄՁ զարգացման պետական գործակալությունը մատուցում է ծառայություններ՝ կապված արտադրության, շուկայարանության, որակի վերակրնողության և այլնի համար:

«Տեխնոլոգիական զարգացման գոտիների մասին» օրենքը խթանում է տեխնոլոգիական զարգացման գոտիներում բարձր/առաջատար տեխնոլոգիաների օգտագործումը և տեխնոլոգիաների կամ համակարգչային ծրագրերի մշակումն ու արտադրությունը, ինչպես նաև հետազոտական և զարգացման հարակից կարողությունները՝ համալսարանների, հետազոտական ինստիտուտների և արտադրողների միջև համագործակցության միջոցով: Ֆինանսական աջակցություն է տրվում, այլոց շար-

քում, հողի գնման, ենթակառուցվածքի և վարչական շենքերի կառուցման համար: Մինչև 2013 թվականը գործում են եկամտահարկից և կորպորատիվ հարկից ազատումներ: Գոտիներում աշխատող հետազոտողները, համակարգչային ծրագրերի ճարտարագետները և հետազոտական ու զարգացման աշխատակազմը նույնպես ազատված են բոլոր տեսակի հարկերից մինչև 2013 թվականը:

«Արդյունաբերական գոտիների մասին» օրենքը նպատակ ունի խրախուսել տեղական և օտարերկրյա ներդրումները՝ առաջարկելով մի շարք խթաններ և ներդրողների համար վերացնելով բյուրոկրատական քաշրշուկները: Արդյունաբերական գոտիները ստեղծվում են Նախարարների խորհրդի կողմից՝ Արդյունաբերության և առևտի նախարարության առաջարկության հիման վրա: Դրանք ստեղծվում են Արդյունաբերական գոտիների հարցերի հա-

մակարդող կոմիտեի սահմանած վայրերում: Նախարարությունը ֆինանսավորում է հողատարածքի ձեռք բերումը և արդյունաբերական գոտիների կառուցման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի նախապատրաստումը:

Ինչպես կարող ենք տեսնել, Թուրքիայում կան ներդրումների խթանման բազմաթիվ ծրագրեր, որոնց գգալի մասը ուղղված է արտահանման ուղղվածություն ունեցող ընկերությունների զարգացմանը: Դրանցով տրամադրվող հնարավորություններից արդյունավետ կերպով օգտվելու դեպքում թուրքական կազմակերպությունները (հատկապես ՓՄՁ-ները) կարող են զգալիորեն նվազեցնել իրենց գործանական ծախսերը և, հետևաբար, ավելի մրցունակ գտնվել ինչպես ներքին, այնպես էլ միջազգային շուկաներում:

Ավելին, ներդրումային մի շարք ծրագրեր ուղղված են տարածաշրջանային անհամաշափ զարգացումը հարթելուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիայի արևելյան շրջանները իրենց զարգացման մա-

կարդակով բավականին զիջում են արևմտյան շրջաններին, ապա սա նշանակում է, որ պետական աջակցության և արտոնությունների գգալի մասը կուղղվի նաև Հայաստանի հետ սահմանամերձ շրջաններին:

Հայ-թուրքական սահմանի վերաբացումից և երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո Թուրքիայում հայկական դիվանագիտական ծառայությանը կից առևտրական ներկայացուցիչը կամ ներկայացուցչունը կարող է մեծապես օգտակար լինել թե՛ հայկական արտահանողների և թե՛ Հայաստանի պետական մարմինների գործունեության համար:

Արտահանման խթանման գործում մեծապես կարևորվում է Զարգացման հայկական գործակալության արդյունավետ աշխատանքը: Անհրաժեշտ է մշակել արտահանման խթանման ծրագրեր՝ մասնավորապես կապված արտա-

**Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության վերաբերյալ օրենսդրության արդյունավետ կիրարկման համար Թուրքիայի վարչական կարողությունները բավարար չեն, ինչը հանգեցնում է խախտումների, ներառյալ՝ կեղծապրանքների բավականին բարձր մակարդակի, որոնք կարող են թափանցել նաև հայկական շուկա: Դա նաև կարող է հանգեցնել դեպի թուրքական շուկա արտահանվող ապրանքների նկատմամբ անօրինական մրցակցության: Հայաստանում մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության մակարդակը նույնապես բավականին ցածր է, ինչը հնարավոր է դարձնում Թուրքիայից մտավոր սեփականության իրավունքները խախտող ապրանքների ներմուծումը, ինչպես նաև դրանց շուկայահանումը Հայաստանում: Ուստի, անհրաժեշտ է Հայաստանում ներդնել մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության արդյունավետ համակարգ:**

հանման վարկավորման և ապահովագրության հետ, որի իրականացման համար պատասխանատու կլինի Զարգացման հայկական գործակալությունը:

Թեև հակամրցակցային համաձայնությունները Թուրքիայում արգելված են, Մրցակցության պաշտպանության մարմնի խորհուրդն իրավասու է մի շաբթ դեպքում թույլատրել այդ համաձայնությունները, ինչը կարող է չարաշահումների առարկա հանդիսանալ և վտանգավոր լինել հայտնեսվարող սուբյեկտների համար:

Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության վերաբերյալ օրենսդրության արդյունավետ կիրարկման համար Թուրքիայի վարչական կարողությունները բավարար չեն, ինչը հանգեցնում է խախտումների, ներառյալ՝ կեղծ ապրանքների բավականին բարձր մակարդակի, որոնք կարող են բափանցել նաև հայկական շուկա: Դա նաև կարող է հանգեցնել դեպի թուրքական շուկա արտահանվող ապրանքների

նկատմամբ անօրինական մրցակցության: Հայաստանում մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության մակարդակը նույնպես բավականին ցածր է, ինչը հնարավոր է դարձնում Թուրքիայից մտավոր սեփականության իրավունքները խախտող ապրանքների ներմուծումը, ինչպես նաև դրանց շուկայահանումը Հայաստանում: Ուստի, անհրաժեշտ է Հայաստանում ներդնել մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության արդյունավետ համակարգ:

Անհրաժեշտ է վերանայել Հայաստանում պետական աջակցության ամբողջ համակարգը: Տրամադրվող աջակցության մեծ մասը կրում է սոցիալական կամ հանրային բնույթ, իսկ ՓՄՁ-ներին տրվող աջակցության չափը բավարար չէ: Պետք է մշակել համապատասխան ռազմավարություն, որով կսահմանվեն Հայաստանում պետական աջակցության հետագա ձևերն ու ուղղությունները: Մասնավորապես, կարևոր է դիտարկել արդյունավետության ու մրցունակության բարձրացմանը և տեխնոլոգիաների ներդրմանը, ինչպես նաև ՓՄՁ-ների

գործառնական ծախսերի նվազեցմանն ուղղված պետական աջակցության ընդլայնման հնարավորությունները:

Թուրքիան համարվում է բավականին անկայուն առևտրային գործընկեր, ինչի մասին վկայում են նաև ԱՀԿ վեճերի կարգավորման շրջանակում երկրի հանդեպ երրորդ երկրների կողմից բարձրացված խնդիրները, որոնց մի մասը երկար ժամանակ լուծում չի ստանում: Սա կարող է հանգեցնել հայկական արտահանողների նկատմամբ առևտրի ոչ արդար կանոնների կիրառմանը: Այս ամենը անհրաժեշտություն է առաջացնում Թուրքիայի հետ առևտրատնտեսական հարաբերությունները կառուցել ավելի կայուն և բափանցիկ հիմքերի վրա: Դա կարող է իրականացվել նաև երկրների միջև վեճերի կարգավորման առանձին մեխանիզմի ստեղծման շնորհիվ, որը կարող է գործել թե՛ ազատ առևտրի քննարկող համաձայնագրի շրջանակներում և թե՛ առանձին:

(Ըստումակենալ)

1 E. Polyakov, Changing Trade Patterns After Conflict Resolution in South Caucasus", World Bank paper, 2000.

2 L. Freinkman, E. Polyakov, C. Revenco, Armenia's Trade Performance in 1995-2002 and the Effect of Closed Borders: A Cross-Country Perspective, Armenian Journal of Public Policy, 1(2), March 2004 pp. 185-212.

3 AEPLAC, Հայ-Թուրքական սահմանների վերաբացման տնտեսական հետևանքները Հայաստանի համար, Ենթադրություններ արտաքին առևտրի վերաբերյալ, 2005 թ.:

4 K. Torosyan, A. Gangidze, R. Beilock, A Phased Strategy for Opening Armenia's Western Border, 2006.

5 M. Baghramyan, Estimating the Change in Trade Flows Between Armenia and Turkey if the Border is Open: Case Study Based on Georgia-Turkey and Armenia-Iran Trade, 2006.

6 World Integrated Trade Solution (Համաշխարհային միասնական առևտրային գործիք):

7 World Development Indicators (Համաշխարհային զարգացման ցուցանիշներ):

# Ազգայնութիւն թէ՝ Ազգայնականութիւն

Կարեն Խանլարեան

Ոյն եզրերը (տերմինները) տարբեր նշանակութիւն ունեն քաղաքական գաղափարաբանութեան բնագաւառում։ Շփոթը կանխարգելելու նպատակ է հետապնդում սոյն նիւթը, որով փորձ ենք կատարել պատասխանել այն հարցին, թէ գաղափարական ինչպիսի տարած է կրում Հ. Յաշնակցութիւնը կամ ի՞նչ է դաւանում Դաշնակցութիւնը՝ ազգայնութիւն թէ՝ ազգայնականութիւն։

Երկու եզրերի տարբերակումը հիմնաւորելու համար նախ կարենոր ենք համարում ներկայացնել տեսաբանների արդի մեկնաբանութիւնները։ Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ արդի ժամանակաշրջանում քաղաքագէտների, փիլիսոփաների, սոցիոլոգների եւ պատմաբանների համեմատութեամբ, լեզուաբանները առաւել մեծ ուշադրութիւն են դարձրել ազգայնութեանը, որպէս ազգայնականութիւնից միանգամայն տարբեր գաղափարի։ Կարծում ենք, որ սա տրամարա-

նական երեւոյք է լոկ այն պատճառով, որ եթէ անցեալ դարասկզբի ռասխատական, շովինիստական եւ նացիոնալիստական շարժումները հիմնականում շեշտը դնում էին ազգերի ռասայական ծագման վրայ, ապա Երկրորդ աշխարհամարտից յետոյ ազգային բացառիկութեան տարբեր շարժումներում հետաքրքրութիւն էր ցուցաբերում, ի թիս այլ սուրյեկտի գործօնների, նաև լեզուական ընդհանրութիւնների հարցի նկատմամբ։ Հետեւաբար լեզուաբանների դիտադաշտում յաճախ է յայտնում նացիոնալիզմը, որի վտանգաւոր հետքերի դէմ գաղափարական բուռն պայքար են մղում ազգային առողջ մտածողութիւն ունեցող լեզուաբանները, նշելով ու ընդգծելով ազգայնութեան եւ ազգայնականութեան էական տարբերութիւնները։

Ազգային առողջ մտածողութեան ջատագով լեզուաբաններից է Զոշուա Ֆիշմանը, ով դեռ 1968 թ. տեսաբանական լուրջ բննարկումների ընդմիջից բնորո-



Հույսա Ֆիւման

շել է ազգայնութիւնը որպէս մարդասիրական գաղափար. «Յանկացած ազգ, որն ապրում է որոշակի աշխարհագրական միջավայրում, ունի իր աշխարհարարական տիեսականությունը: Քանի դեռ որեւէ նոր ազգի աշխարհաբարական սահմանները որոշում են քաղաքական անկախութեամբ, ազգի պարտականութիւնն է ի մի բերել այդ ժողովրդի դարրեր հաւաքանութիւնները, որ կարող են դեղատրուել նոր ազգի մէջ՝ նրա դնդանական, քաղաքական, իրաւական, կրթական եւ այլ հասդարպութիւնների միջոցով: Այսպիսի համարկման նպագրակը եւ արդիւճը՝ աշխարհաբարականորէն եւ սոցիոմշակութային կերպով, համարում է ազգայնութիւն (nationalism)» (Fishman J., Ferguson C. and Das Gupta J., Nationality-Nationalism and Nation-Nationalism, Language Problems of Developing Nations, New York: John Wiley & Sons Inc., 1968):

Ֆիշմանը իր խորքային քննարկումներում կտրականապէս տարրերակել է ազգայնութիւնն ու ազգայնականութիւնը: Ազգայնութիւնը (nationalism), ըստ նրա, վերաբերում է մարդկանց որոշակի խմբից հաւաքական ինքնութիւն կազմելու ջանքին, ընդ որում, ազգի ձեւատրումը պայմանաւորուած է ազգային գիտակցութեամբ: Ֆիշմանի համոզմանը, ազգայնականութեան (nationalism) մտայնութիւնը նպատակամդուած է սոցիոմշակութային համարկմանը, մինչդեռ ազգայնութիւնը ուշադրութիւն է դարձնում քաղաքական-աշխարհագրական համարկմանը (նշուած աղքիր):

Պէտք է ասել, որ Ֆիշմանի շեշտադրումը ազգակացութեան քաղաքական-աշխարհագրական գործօնի վրայ, ըստ Էութեան, համահունչ է ազգերի պատմական ձեւատրման մասին Հ.Յ.Դ. քազմաթիւ տեսաբանների մօտեցումներին, իսկ ազգային գիտակցութեան նշանակութեան ընդգծմամբ, նրա տեսութիւնը մերձենում է Միքայէլ Վարանդեանի կողմից առաջադրուած «Հայրենիքի գաղափար»-ին: «Մի գաղփակի կայ ազգայնութեան գաղափարի մէջ, որ երբէք չի դրսեւորում, որ խոյս է դաշիս մեր դիվողութիւնից, գրում էր Վարանդեանը 1904 թ.- մի գաղփակի կայ, որ աւելի քարջը է, աւելի հարուստ, աւելի խորունկ, աւելի ընդարձակ, քանի բոլոր բնորոշիչ գծերը, որ կարող ենք քուել՝ լնզու, կրօն, արինակցութիւն եւ այլն» (Վարանդեան Մ., Հայրենիքի գաղափարը, Բեյրութ, 1985, էջ 30): Այս տրամաբանութեամբ, հետեւաբար, Ֆիշմանի ազգայնութիւն-ազգայնականութիւն հասկացութիւնների կտրուկ տարրերակումը գերազանցապէս համընկնում է Հ.Յ.Դ. տեսական համոզումներին:

Լատինաամերիկեան որոշ հեղինակներ են կիսում են ազգայնութեան եւ ազգայնականութեան տարրերութեան Ֆիշմաննեան կարծիքը. «Ազգայնութիւնը (nationalism) արդացուում է աշխարհաբարական ընդհանրութեան լրմոնումը, մինչդեռ ազգայնականութիւնը (nationalism) արդացուում է սոցիալ-մշակութային ընդհանրութեան հասկացութիւնը» (Bulletin of Latin American Research, Volume 23 Issue 2 Page 260-284, April 2004): Կարծում ենք, որ սոյն որուագծումը, առանձին վերցրած, խիստ նեղ եւ անձուկ է ազգայնութեան բնորոշման համար: Այդուհանդերձ, այս կարգի բնորոշումները նշանակալից են միայն այն առումներով, որ մի կողմից՝ սահմանում են ազգայնութեան եւ ազգայնականութեան տարրերութիւնը եւ միևնույն կողմից՝ ազգայնութեան հիմքում դնում են հայրենիքի գաղափարը, որին մենք իհարկէ լիարժեք կողմ ենք:

Այսպիսով՝ ազգայնութեան գաղափարի գանազան սկզբունքների տեսական ամրագրումներն ի մի բերելով, հնարաւոր է դառնում պարփակել մեր պատկերացումներն ընդհանուր գաղափարի մասին:

Ազգայնութեան արժեքային ոլորտում Հայրենիքի

գաղափարի կողքին, անհրաժեշտաբար եւ անխուսափելիօրէն, յառնում է նաև Անկախութեան գաղափարը: Ահա ազգայնութեան այս երկու հիմնարար սկզբունքների սերտաճման մասին է վկայում մի այլ տեսաբան՝ մարոկացի Մուստաուին. «Այնուամենայնիւ-, ասում է նա 2006 թ.- մենք պէտք է դարբերակենք ազգայնականութիւնը ազգայնութիւնից, այսինքն՝ արժէքների, հաւաքամքների եւ քնառորութիւնների այն համակարգից, որը որոշակիորէն առնչում է քաղաքականապէս անկախ մի դարածքի ձեռք բերմանը» (Adil Moustoni, Morocco, “Language and Legislation”, CIEMEN (Escarrn International Centre for Ethnic Minorities and Nations), Working Papers 22, 2006): Հ.Յ.Դ. ազգայնութեան դիտանկիւնից պետութեան անկախութիւնը համարում է անփոխարինելի պայման. «Իր հայրենի դարածքի վրայ իրաքանչիր ազգի գոյակրեւման երաշխիքը անկախ եւ իրաւական պերականութիւնն է» (ՀՅԴ Ծրագիր, 1998):

Ազգային գիտակցութեան եւ ազգի պատմական ձեւարման գործընթացում հայրենի տարածքի, ազգային բնօրբանի գաղափարին առանձնայատուկ նշանակութիւն տալու խմասով հետաքրքիր մեկնաբանութեամբ է հանդէս գալիս շինացի տեսաբան Ֆանգ Չու Վանգը: Նա, նշմարելով ազգայնութեան ու ազգայնականութեան խորքային տարբերութիւնները, ասում է. «Այն դէպում, երբ քաղաքական սահմանների հարցը առաւել ցայլում է եւ առաւել ջանքեր են ուղղում դրանք ձեռք բերելու եւ ամրացնելու համար, անկախ այդ սահմաններում ընդգրկուած քնակչութեան անմիջական սոցիոնշակութային քնութագրից, պէտք է նախապարուութիւնը դալ ազգայնութիւնն ինքնինին: Դեռ աւելին՝ ազգայնութիւնը վերաբերում է քաղաքական-աշխարհագրական այն հիմքին, որի վրայ իրականացում են էքսուի եւ ազգութեան սոցիոնշակութային վերափոխումները» (Fang-Yu Wang, “Nationalism without Linguism? Reevaluating the Chinese orthography in the context of language revitalization”, 2008.09.06):

Այս լրացումով Վանգը ոչ թէ թերարժեւորում է ազգային գիտակցութեան ձեւարման գործընթա-

ցում սոցիալական եւ մշակութային գործօնների նշանակութիւնը, այլեւ վեր է հանում քաղաքական եւ աշխարհագրական տարածքի, հայրենիքի հիմնարար նշանակութիւնը, որն էլ համարում է ազգայնութեան եւ ազգայնականութեան էական տարբերութիւններից մէկը:

Ազգ հասկացութեան բնորոշման Հ.Յ.Դ. տեսութիւնը ներկայացուել է նրա գործող Ծրագրում, որ ասում է. «Հ.Յ.Դ. նաշնակցութեան համար ազգը՝ իրեւ պալումական-մշակութային, լեզուական եւ ընկերային-քաղաքական ուրույն ամրողութիւն, հիմնական արժէք է եւ համարդկային զարգացման ու հոգեմրաւոր քազմակողմանի հարստացման էական գործօն»՝, որ «...անհայր ձեռք է բերում հոգեմրաւոր քարզաւաճման լայն համաւորութիւն...» (ՀՅԴ Ծրագիր, 1998): Նկատելիօրէն Դաշնակցութեան սոյն տեսութիւնը մօտենում է ազգայնութեան մասին Վանգի կողմից նշուած սահմանմանը: Հետաքրքիր է նաև Վարանդեանի մօտեցումը, որով նա ազգ եւ հայրենիք եզրերը որակում է որպէս համազօր հասկացութիւններ: «Երկու բառերի մէջ՝ գրում է նա, - դարբերութիւնը աւելի ճեսական է, քան թէ էական» (Վարանդեան Մ., Հայրենիքի գաղափարը, Բեյրութ, 1985, էջ 30): Հ.Յ.Դ. վաստակաւոր մտարական Վահան Նաւասարդեանը, նշուած նոյնութիւնը առաւել պատկերաւոր է քացատրում. «Նոյնին են ազգն ու հայրենիքը, - գրում է նա, - ինչ որ մարդու մէջ մարմինն ու հոգին առանց հոգու՝ մեխած դիակ է մարդու մարմինը, որ հոդ էր ու հոդ պիտի դառնայ, առանց մարմնի՝ անհիմանալի մի էութիւն է մարդու հոգին...» (Նաւասարդեան Վ., Հ.Յ.Դ. գաղափարաբանութիւնը, Բեյրութ, 1983, էջ 59-60): Տեսական այս մօտեցմամբ էլ, ի դէպ, մերժում է «մշակութային ազգ», «անհայրենիք ազգ» եւ «վիրտուալ հայրենիք» բուն նացիոնալիստական հասկացութիւնները:

Պետք է նկատել, որ բազմաթիւ ազգայնական մտայնութիւններն ել ազգայնութեան պէս կարեւորում են հայրենիքի գործօն դերն ու նշանակութիւնը, սակայն, ընդհանրապէս, խուսափում են նրա առանցքի շորջ մշակել քացառիկութեան սկզբունք: Այս խուսափումը հիմնարուում է նրանով, որ ազգային տարածքի եւ պատմական հայրենիքի առարկան, մակերեսի, բնական, կլիմայական եւ տարաբնոյք այլ օբյեկտի պատճառներով, ինք

ՀՅԴ ԳՐԱԴՐԱՆՑԻ  
ԳՐԱԴՐԱՆՑ  
A.R.F. BUREO  
LIBRARY

նին նեղացնում, սահմանափակում է բացառիկութեան սկզբունքի շրջագիծը: Նացիոնալիստների բացառիկութեան սկզբունքը գլխաւորաբար սկզբ է առնում ազգի ենթակայական, սուրյեկտի բաղադրիչներից: Ինչպէ՞ս կարելի է, օրինակ, գերմանական հայրենիքի բնութեան շուրջ դպսեւորել սնապարծութեան երեւյթներ, եթէ դա առանձնաբար շատ էլ չի տարբերում հարեւան ազգերի հայրենիքների բնութիւնից: Կամ ինչպէ՞ս կարելի է պնդել իտալական եկեղեցիների, պատմական կորողների բացառիկութեան սկզբունքը, եթէ հարեւան ազգերի ճարտարապետութեան մէջ էլ գոյութիւն ունեն նմանատիպ առանձնայատկութիւններ:

Նոյնը կարելի է ասել նաեւ ազգի ռասայական ծագման մասին, եթէ, իհարկէ, շատ ազգերի պարագայում անաղարտ պահպանուած լինի այդ առանձնայատկութիւնը: Արդի նացիոնալիստական մտայնութիւնների համար ազգի ռասայական ծագման գործօնն էլ հազուադէպ է վերածում բացառիկութեան առարկայի: Դեռ անցեալ դարի կէսերին ռասայական առանձնայատկութեան եւ բացառիկութեան վրայ հիմնուած ազգայնականութիւնը դատապարտուեց տեսական սնանկութեան եւ անհեթերութեան: Իսկ ներկայիս, գենետիկական գիտութեան զարգացման պայմաններում, իսպառ անձարակութեան է մատնում ռասայական բացառիկութեան պնդումը:

Դժուար չէ նկատել, որ մանաւանդ արդի ժամանակներում, զանազան ազգերի ազգայնական մտայնութիւններում բացառիկութեան սկզբունքները կայանում են լեզուական, մշակութային, քարոյահոգեբանական եւ կրօնական առանձնայատկութիւնների հենքի վրայ: Ազգի կազմութեան ենթակայական առանձնայատկութիւնները տարբերուելով միևն ազգերի նմանատիպ բաղադրիչներից, կարող են համարուել բացառիկութեան, գերակայութեան, տիրապետութեան եւ նախապատութիւնների «գլխաւոր պատճառ» եւ նոյնիսկ «բնական իրաւունք»: Ահա հենց սրան են ներկայում ձգտում նացիոնալիստական մի շարք մտայնութիւններ:

Ազգ համակարգի երկու այլ էատարբերի կամ ազգային գիտակցութեան ձեւաւորման հիմքում ընկած երկու այլ գործօնների, այսինքն՝ ազգային լեզուի եւ ազգի

բաղարական ձգտումների միջեւ փոխյարաբերութեան եւ փոխներգործութեան հարցում չինացի տեսաբան Վանգը դարձեալ ուրուազծում է ազգայնութեան եւ ազգայնականութեան եւս մէկ տարբերութիւն. «Ազգայնականութիւնը արդայայլում է լեզուի սոցիոլցակութային ֆունկցիան,- շեշտում է նա,- միևնուու ազգայնութիւնը արդայայլում է նաեւ լեզուի բաղարական ֆունկցիան: Ի սկզբանէ ազգայնութեան համար լեզուի հարցերը միմիայն ինքնութեան հարցեր չեն, այլ՝ համայնքուածութեան եւ ներգործութեան» (Fang-Yu Wang, “Nationalism without Linguism? Reevaluating the Chinese orthography in the context of language revitalization”, 2008.09.06):

Ազգայնականութեան եւ ազգայնութեան բաղարական տարբերութիւնների մասին մէկ այլ ուշագրաւ մեկնարանութիւն է տալիս նիզերիացի տեսաբան Օրուասին. «Ազգայնականութիւնը ընդհանուր ինքնութեան հաւակնութիւնը վեր է դասում այլ էթնիկական հակումներից եւ օրինապահութիւններից (loyalty),- գրում է նա 2007 թ.,- այնուամենայնի բացառիկութիւն, մարզինալութիւն, զիրապելութիւն եւ սակաւապելութիւն պարրապող ազգայնականութեանը հակադրում է ազգայնութեան գործունը» (Ifeoma Obuasi, Use of English Unit School of General Studies University of Nigeria, “English Language in a Nationistic State: The Crises of National Integration in Nigeria”, 3rd Global Conference: Pluralism, Inclusion and Citizenship in Salzburg, Austria, 16-18 November, 2007):

Տեսաբանութեան ասպարեզում առկայ են նաեւ տարբերակումների ձեւական եւ ծագումնաբանական բնութագրումները: Օրինակ, ըստ Լոնդոնի տնտեսագիտական դպրոցի փորձագէտ Ջոն Բրեւոլիի, «արեւմըրեան ազգերը արդադրել են արեւմըրեան ազգայնութիւն (nationalism), արեւելեան ազգերը՝ արեւելեան ազգայնականութիւն (nationalism)»:- Գրել է նա 2006 թ. ([www.hnet.org/~national/Breuilly.pdf](http://www.hnet.org/~national/Breuilly.pdf)):

Որոշ տեսաբաններ, սեփական ազգի առարկայական կենսափորձից մեկնելով, նկատառելի եղրակացութիւնների են յանգում: Այսպէս, Իոլանդիայի Հանրապետութեան խորհրդարանի պատմական բանավեճերի կայքէցում (կոչում է՝ Historical Debates Website) կարելի է հանդիպել արդիական խորհրդածութիւնների՝ ազգայ-

նուրեան եւ ազգայնականութեան էական տարբերութիւնների մասին: Այսպես. «*Մենք պէտք է սկսենք նոր քան մրածել կապուած Հիսիսային Իոլանդիայի հետ, ասում է իոլանդացի տեսարան, նախկին պատգամատը, Իոլանդիայի լեյբորիստական կուսակցութեան ղեկավարներից մէկը՝ Դիկ Սպրինգը, 1992 թ.: - *Մենք կարիք ունենք նոր հասկացութեան, որը կը սահմանի ազգութիւնը՝ ինչպէս մրա ժողովրդի իրաւումքները, այնպէս էլ մրա զրադեցրած լուրածքը: Հասկացութիւնը (concept), որ ես պարկերացնում եմ, կարող է կոչուել սույն շուրջ ազգայնութիւն (nationalism), քան ազգայնականութիւն (nationalism): Յանկացած քննարկում ազգայնութեան (nationism-ի) մասին պէտք է սկսել քաղաքացիութեան ելակետից եւ առաջանալ մինչեւ անհաղի իրաւումքները: Այն աւելի շատը կը վերաբերի միքում եւ սրբում եղած սահմանին, քան երկրի վրայ գոյութիւն ունեցող սահմանին: Այն կը լինի աւելի շատը լուրու, քան վերցնելու պրոցես, աւելի նպակակառուղուած մարդկանց ընդհանուր նպակականութիւնը շուրջ միաւորելու, քան վաղեմի արելութիւնը լուրածելով, մինհանցից բաժանելուն: Ամենակարեւորը, ազգայնութեան առանցքային սկզբունքը պէտք է լինի այն, որ ազգութիւնը քաղաքած է մարդկանցից: Ազգայինը, նացիոնալիուր երբէք ընդունելի չի համարի մարդկանց ոչնչացումը, ինչպէս որոշ ազգայնականներ, նացիոնալիստներ են դա ամուս: Ահա թէ ինչու մենք պէտք է սկսենք սկզբից...: Մեր ազգի այդքան շատը ընդունիքների ցաւն ու լուրապանը հրամայական են դարձնում, որ մենք սկսենք ամրող գործընթացը նորից: Այն իիմնաւոր փոփոխութիւններ կը միցնի մարդկանց վերաբերմունքի մէջ: Այն կը պահանջի ոխովի դիմել: Այն կը նշանակի իիմը դեռ ներել այնպէս որ մենք չենք կարողանայ քարձուել մեր պակմութեան ցանկացած ծերի մեկնարանութեան ելքնում: Այդ անելու ժամանակը իիմա է» (<http://historical-debates.oireachtas.ie/D/0415/D.0415.199202110006.html>):**

Արդէն տասնամեակներ առաջ անկախացած, քայց սեփական հայրենիքի մի մասը կորցրած Իոլանդիայում, Սպրինգի առաջադրած ազգայնութեան գաղափարի սահմանման մէջ, ակնառու են ինչպէս քաղաքացիութեան եւ անհատի իրաւումքների հարցերը, այն-




Դիկ Սպրինգ

պէս էլ ամբողջական հայրենիքի գերխնդիրը:

Վերը նշուած տեսաբանների տարաբնոյք որոշ սահմանումները եւ քանաձեւումներն ամբողջապէս չեն, որ համընկնում են Հ.Յ.Դ. տեսական ընկալումներին, այնուամենայնի մէջքերելով դրանք, նպատակ ենք հետապնդում ընդգծելու խնդրոյ առարկայ երկու ըմբռնումների էական տարբերութիւնը:

Առանց խորանալու ազգի կազմութեան մասին Հ.Յ.Դ. տեսութեան մէջ, կը փորձենք քննութագրել Հ.Յ.Դ. տեսաբանական նախապատութիւնը ազգայնութեան գաղափարի նկատմամբ:

Ազգը սոցիալական զարգացման լաւագոյն ձեւն է: Տեսական համընդիանուր ֆոնի վրայ, կարելի է պարզ տրամարանութեամբ ապացուցել, որ ազգերի բնականն զարգացումը պայմանաւորուած է ազգի սոցիալական առողջութեամբ: Փոխադարձաբար, կարելի է սոցիալական զարգացման հարցը կապել ազգային կենսունակութեան հարցին: Ազգը ազգային զարգացում կարող է ունենալ այն դէպքում, եթք ազատագրուել է սոցիալական անարդարութիւններից, եթք գոյութիւն չունեն շերտերի միջեւ դասակարգային ճեղքուածքներ, եթք հասարակութիւնը սոցիալապէս բենուացուած չէ: Միև կողմից ազգը սոցիալական լիարժեք զարգացում



Հրանտ Տէր Արքահամեան

Հի կարող ունենալ, եթէ շլուծուած են մնացել նրա ազգային հիմնախմբները:

Ահա այս պարզ տրամարանութեան հիման վրայ էլ դասական ազգայնականութիւնը, չկարողանալով առաջադրել սոցիալական հարցերի լուծման մեխանիզմներ, դադարում է համապարփակ գաղափարախօսութիւն լինելուց: Այս իսկ պատճառով ազգայնականութիւնը, անհրաժեշտարար, կցւում է սոցիալական համապատախան տեսութիւնների, ընդհանրապէս այլակերպուելով ազգայնամոլութեան եւ բացառիկութեան այլ գաղափարախօսութիւնների: Պէտք է ասել, որ անցեալ դարասկրզբին տեսութիւնների այսպիսի կցման փորձերը յանցեցրին իտալական ֆաշիզմի կամ գերմանական նացիզմի:

Ազգայնութիւնն էլ, ազգայնականութեան նման, առանձնաբար սոցիալ-քաղաքական գարգացման եւ ոչ մի հեռանկար չի կարող պարզել ազգի համար: Սակայն, ի տարբերութիւն նացինալիզմի, ազգայնութիւնը, որպէս առողջ ու շարժունակ գաղափար, ընդունակ է դիմուգացուել, մերուել եւ համաձուլուել մարդկային արժեքների հիմքի վրայ ձեւատրուած մերձաւոր գաղափարների հետ եւ վե-

րածուել արժեքային կոմպակտ համակարգի բաղադրիչ մասնիկի: Ներկայումս ազգայնութեան եւ լիբերալիզմի գաղափարների դիմուգիայի որոշ օրինակներ կարելի է գտնել եւրոպական մի շարք նացինալ-դեմոկրատական կուսակցութիւնների գաղափարախօսութիւնների մէջ: Գաղափարական դիմուգիայի պատմական եւ արդիական առաւել յաջող օրինակներ կարելի է նշարել եւրոպական սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական եւ լյուրիստական բազմաթիւ կուսակցութիւնների արժեքային համակարգերում, որտեղ ազգայնութեան գաղափարը համաձուլուել է դեմոկրատիայի, սոցիալական արդարութեան, մարդու իրաւունքների եւ քաղաքացիական ազատութեան սկզբունքների հետ եւ կազմել մարդկային արժեքների վսեմ համակարգ:

Քաղաքական միտքը Հայաստանում եւս ազգայնութեան գաղափարի եւ այլ մարդկային գաղափարների դիմուգացման որոշ փորձարկումներ է կատարում: Թերեւս այսպիսի որոնումների ամենաքարմ օրինակներից կարելի է համարել Հրանտ Տէր Արքահամեանի տեսաբանական վերլուծութիւնը, որով նա փորձում է ճանապարհ հարթել ազգային եւ ազատական արժեքների «սինթեզման» համար: «Այն ուղղութիւնը,- գրում է նա «Ազատական ազգայնականութեան նախադրեալները» յօդուածում, 2009 թ. մայիսի 7-ին,- որը համադրում է ազգայինն ու ազատականը, դեռ իր յարակ անունը չունի Հայաստանում, բայց անպայման պէտք է ունենայ, եթէ Հայաստանի անկախութիւնը իրականութիւն է, այլ ոչ թե ֆիկցիս» (<http://www.7or.am/hy/news/2009-05-07/1933/>): Նրա այս ողջունելի փորձը օժտուած է տրամաբանական բաւարար լրջութեամբ, սակայն նրա մօս եւս դրսեւուում է «ազգայնութեան» եւ «ազգայնականութեան» գաղափարների շփորչը, ընդ որում ոչ միայն եզրաբառային, այլև ընկալումային: Նա, թերեւս, այս շփորի արդիւնքում զարմանում է ազգայնականութեան եւ ազատականութեան գաղափարների սինթեզման հարցում հայկական ազգայնականութեան անընդունակութեան հետեւանքով, եւ հարցի տեսաբանական պատճառները որոնում է միմիայն քաղաքա-տարածաշրջանային ոլորտներում: Մեզ մնում է եւս յիշեցնել, որ այս անընդունակութիւնը բնաւ էլ պատահական չէ եւ իրայատուկ չէ միայն Հայաստանին: Հայկական ազ-

գայնականներն ել, ի թիս աշխարհում իրենց միւս նացիոնալիստ գաղափարակիցների, սկզբունքային լուրջ վերապահումներ ունեն այլ գաղափարների հետ սին-թեզուելու հարցում: «Ազգայնականութիւնն,- ասում է «Հանրապետականը», - ինքնին թելադրուած է ազգերի գոյութեամբ եւ որպէս այդպիսին՝ յափրենական արժէք է» («Հանրապետական», թի 1, 2003): Ինքն իրեն ազգ հասկացութեան հետ նոյնացնող եւ ըստ այնմ ինքն իրեն յափրենական արժէք համարող ազգայնականութիւնը այլ գաղափարների նկատմամբ միանգամայն տարբեր վերաբերմունք է դրսեւորում: Նոյն «Հանրապետականը» վկայակոչելով իր գերմանացի գաղափարակցի տեսակետները, արծարծում է խիստ մերժողական դիտանկիւն դեմոկրատիայի գաղափարի նկատմամբ. «Համարել ժողովրդավարութիւնը քացարչակ արժէք,- մէջ է բերում գերմանական պահպանողականութեան խոշոր տեսարան Բեռնարդ Վիլմսի մտքերից, - Աշանակում է ցուցաբերել մակերեսային մրածելակերպ եւ ցանել քաղաքացիական պարերազմի սերմեր հասարակութիւնում» (Նշուած աղբիրը): Ազգայնականութիւնը եւ ժողովրդավարութիւնը արժութարանական տարբեր հարբութիւնների վրայ գետեղման մօտեցումը ահա հենց այն սկզբունքային վերապահումն է, որ տեսականօրէն խոշընդուում է դիֆուզացման գործողութիւնը:::

Դատելով Հրանտ Տէր Արքահամեանի յայտնած տեսակետներից, պէտք է ասել, որ «ազգային»-ը, որի եւ ազատականի համարման մասին նախադրեալներ է մշակում նա, աղերս չունի դասական ազգայնականութեան հետ եւ չի էլ կարող ունենալ: Նրա «ազգային» հասկացութեան տեսական սահմանումները աւելի բնորոշ են ոչ թէ բազայնականութեան, այլ ազգայնութեան առողջ գաղափարին:

Տարբեր ազգութիւնների քաղաքական գաղափարախօսութիւնների պատմութեան ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս ասելու, որ ազգայնականութեան մտայնութիւնը միշտ էլ ի վիճակի է ազգայնամոլութեան կերպափոխուել: Այս կապակցութեամբ աւելորդ չենք համարում մէջբերել հայ քաղաքական մտքի եւս մէկ վերլուծութիւն, որն առնչում է ազգայնամոլութեան գիրկը ընկնելու ազգայնականութեան բնական սայթաքման երեւոյթին: «Վերջին շրջանում,- գրում է «Նորավանք» գիտակրթական

հիմնադրամի վերլուծաբան Թամարա Վարդանեանը, 2005 թ., - նոյնական քաղաքագէլուների, հասարակագէլուների շրջանում աշխոյժ քննարկումներ եւ քանակէներ են ընթանում ազգայնականութեան որակման շուրջ: Մի կողմից՝ արդարացի է համարում իրենց մշակոյթը, լեզուն, ինքնուրիմնը պահպանելու մարդկանց բնական ծգուումը, միւս կողմից՝ այս բնական մղումը յաճախ վերածում է սեփական ազգի գերարծեւորման, որը յանգեցնում է անհաւասարութեան եւ խպրականութեան (ընդգծումը մերն է, - Կ. Խ.):» (<http://www.noravank.am/am/?page=analitics&nid=116>):

Յաճախ շովինիզմի վերածուելու իր այս բնական յատկութեամբ եւս, ազգայնականութիւնը բաւականին ունակ է մերժելու մարդկային վսեմ արժեքները, ինչպիսիք են արդարութիւնը եւ ազատութիւնը: Հետեւաբար կ'առաջարկեինք Հրանտ Տէր Արքահամեանին տերմինուղիքական յատկեցումներ մտցնել իր տեսարանութեան մէջ եւ «զուտ տեսական մի սխալի խիստ գործնական հետեւանք»-ներից հեռու մնալու համար, հաշուի



Թամարա Վարդանեան

առնել այն պարզ իրողութիւնը, որ ազգայնութեան գաղափարի եւ լիբերալիզմի համադրումն աւելի հաւանական է քում, քան ազգայնականութեան գաղափարի դիֆուզիան ցանկացած այլ գաղափարի հետ:

Թէեւ, մեր համոզմամբ, սոցիալիզմն ու սոցիալ դեմոկրատիան տեսական առաւել մերձութիւն ունեն ազգայնութեան գաղափարին, քան` կոսմոպոլիտութեան ստորոգելիներով յաճախ բնութագրուող լիբերալիզմը:

Պատմական փորձով կարելի է եզրակացնել, որ նացիոնալիզմը միշտ էլ եղել է ոչ թէ ազատագրութեան (էմանսիպացիա), այլ տիրապետութեան (դոմինացիա) գաղափարախօսութիւն: Նացիոնալիզմ են որդեգրել, հիմնականում, մեծապետական ռէժիմները, մի կողմից ասիմիլացնելու իրենց պետութեան մէջ ապրող էթնիկական փոքրամասնութիւններին, իսկ միևնույն կողմից՝ վարելու զարդարական, ծառալապաշտական քաղաքականութիւն հարեւան ազգերի նկատմամբ: Փոքր ազգերը, որոնք, չնշին բացառութեամբ, գտնուել են ազգային ճնշման տակ, բնականարար, հեռու են մնացել նացիոնալիզմի մտայնութիւններից եւ արարել ազատագրութեան սեփական գաղափարներ:

Այնուամենայնի նրանց ազատագրական շարժումներն, անարդար կերպով, որակուել են «նացիոնալիստական» հենց այդ մեծապետական ռէժիմների կողմից: Որակումներ տուողի եւ պիտակատրողի նոյն տիսուր դերում են յաճախ հանդէս եկել նաեւ մարքսիստական եւ բոլշևիկեան կուսակցութիւնները, որոնք, սերտաճելով ազգային շարժումների հետ, քաղաքական տարաբնոյք պատճառաբանութեամբ, հայկական, լեհական, բուլղարական ազատագրական պայքարները անուանել են «նացիոնալիստական»:

Պատմականօրէն բնաւ պատահական չէ այն երեւոյթը, որ ազգային ազատագրական պայքար մղող ուժերը, բացայատ կամ աներեւոյթ կերպով, յարում են արդարութեան հիմքի վրայ ձեւատրուած զանազան գաղափարախօսութիւնների: Նոյնպէս պատահական չէ, որ լիարժեք անկախ պետութիւններում գործող եւ միմիայն ներազգային, ներպետական հարցեր ունեցող սոցիալիստական կամ սոցիալ-դեմոկրատական հոսանքները, պատմութեան մէջ, զօրակցել են ազգային ազատագրական շարժումներին:

Ազգայնութեան, արդարութեան, ազատութեան եւ յեղափոխականութեան գաղափարների համադրմանն եւ նրանց հիմքի վրայ ամբողջական գաղափարախօսութիւն խարսխելու ձգտումը ի սկզբանէ ի յայտնեկել Հ.Յ. Դաշնակցութեան գաղափարախօսութեան ձեւատրման պատմութեան մէջ:

Դեռեւ 1907 թուականին Հ.Յ.Դ. չորրորդ Ընդհանուր Ժողովում գաղափարախօսական եւ տեսաբնական բանավէճերի ժամանակ, Ռոստոմը հանդէս է եկել ինչպէս սոցիալիզմի, այնպէս էլ ազգայնութեան գաղափարի ջերմ պաշտպանի դիրքերից: «Մեր դասմած ազգայնութիւնը «մեղուականի» ու «մշակականի» ազգայնութիւնը չէ,- ասում է Ռոստոմը Ընդհովի նիստերից մէկում,- աշխարհատրական լրեսակեդից մինք եղել ենք ու պիտի մնանք ազգային» (Գաղափարագրութիւն Հ.Յ. Դաշնակցութեան, Ա. հատոր գաղափարաբանութիւն, 1997, էջ 206):

Անցեալ դարասկզբի այլ դաշնակցական տեսաբնաններ եւս փորձեցին տեսաբանական հոդի վրայ տարբերակել Հ.Յ.Դ. ազգայնութեան գաղափարը ազգայնականութիւնից (նացիոնալիզմից): «Ակներէն է այդ բոլորից,- զրում է Գարեգին Խաժակը դեռ 1912 թուականին,- որ լրիրող կեղեքող դասակարգերի հայրենասիրութիւնը, նրանց նացիոնալիզմը լրիրապետող ձնշող հալածող է այլազգիներին, հպատակներին» (Խաժակ Գ., Ինչ է ազգութիւնը, Բեյրութ, 1974, էջ 273):

Այս իմաստով առաւել տպատրիչ են Միքայէլ Վարանդեանի պարզաբանումները: «Դա (նացիոնալիզմ, Կ. Խ.) հայրենասիրութիւն չէ, այլ նրա կեղծումը, իսկուրիւրումը: Դա զոռող մեծամիկ հայրենամոլութիւնն է, որ չունի ոչինչ առլնչութիւն ճշմարիր հայրենասիրութիւն հետ,- զրում է Միքայէլ Վարանդեանը 1910 թուականին:- Նացիոնալիզմը հարուածում է մարդկային արժանապարուութեանը, ծնում է սովորաբար ակելութիւն ու արհամարհանք դէպի միևնույն ազգերը: Նացիոնալիստը սիրում է իր ազգը, ուրիշ ազգերին արելու պայմանով» (Վարանդեան Մ., Վերածնուղ Հայրենիքը եւ մեր դերը, Ժնև, 1910, էջ 141):

«Մեր իրականութեան մէջ,- ընդգծում է դարձեալ Միքայէլ Վարանդեանը,- իշխելու, ուրիշներին սրբազնութիւնը լրեղ չի կարող գրմանը

հարկաւ, բայց մեզ մօք ես շովիմիսպական հիսանդուրիմը արդայալուս է յաճախ ազգայնական ունայնապիհ ինքնահաւանութեան մէջ: *Մեզ մօք ես կայ ճան, աղմկասէր նացիոնալիզմը...* Սիրել պաշտպանէլ հարազար ազգայնութիմը, մայրենի լեզուն, հայրենի սրբացուածքները, կուլտուրական ժառանգութիւնը եւ այլն - դա ժամանակակից ամէն մի կրթուած անհապի յարկանիշն է» (Վարանդեան Մ., Վերածնուող Հայրենիքը եւ մեր դերը, Ժնեւ, 1910, էջ 143):

Նոր շրջաններում եւս մի շարք դաշնակցական մտաւրականներ, հետամուտ լինելով Հ.Յ.Դ. գաղափարական գծին, շարունակել են տարբերակման մոտեցումների կիրառումը: Խաչիկ Տ. Ղուկասեանը, Հ.Յ.Դ. ծրագրի վերամշակման նախօրէին, իր տեսաբանական յօդուածներից մէկում, հանդէս է եկել «ազգայնութեան իրայատուկ ըմբռնումի» պահպանման դիրքերից:

Վերը նշուած յօդուածի առանցքային մօտեցման շորջ դիպուկ բնութագիր է տուել «Գրօշակի» օրուայ խմբագրակազմը, հետեւեալ մեկնաբանութեամբ. «*Մեր աշխարհակիցը հիմնական հակառութիւն մը կը դիսաւ «ազգային» եւ «ազգայնական», ինչպէս նաև «ազգայնութիւն» եւ «ազգայնականութիւն» բառ-յլացքներուն միջեւ «ազգային»-ն ու «ազգայնութիւն»-ը կը սահմանէ իրեւ արդայալութիւնը սեփական-ազգային արմադրութեան կառուելու առողջ մօլուցումին, որ կը հարսացնէ մարդկային արժեքները, մինչդեռ «ազգայնական»-ն ու «ազգայնականութիւն»-ը կը գործածէ իրեւ ազգայնամոլութեան հումանիշներ, որոնք այլամերժ են»:*

Այսքանով եզրակացնենք, որ Հ.Յ.Դ. ազգայնութեան գաղափարը կապ չունի ազգայնականութեան հետ, հենց այնպէս ինչպէս նրա սոցիալիզմը, ընկերվարութիւնը հեռու է պետական կապիտալիզմի գաղափարախօսական հենքը հանդիսացող՝ մարքս-լենինիզմի «սոցիալիզմ»-ից, իսկ նրա դեմոկրատիզմը, ժողովրդավարութիւնը՝ լիբերալական ընկալումներից: Հնարաւոր է, որ Հ.Յ.Դ. գաղափարական միս արժեքներն ել ունենան իրենց իմտասիոն տարբերակները տեսաբանական աշխարհում:

Յոյժ կարեւոր է, սակայն, ինչպէս քաղաքագիտու-

թեան, այնպէս էլ գաղափարախօսութեան մէջ, իրերը, գաղափարները կոչել ճշգրիտ եւ ճշմարիտ անուանումներով:

Տեսական այս տարբերակումը նաև այժմէական անհրաժեշտութիւն է: Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադրման շրջանից փորձ է կատարուել նրա ճակատին փակցնել նացիոնալիզմի պիտակը: Բոլշեվիկները դաշնակցականներին անուանում էին մանր-բուրժուական նացիոնալիստներ, ապա՝ բուրժուա-նացիոնալիստներ: Արեւմտեան ուժերը եւս Դաշնակցութեանը համարում էին նացիոնալիստական ուժ: Ինչո՞ւ են Դաշնակցութեան գլխին փաթաթում մի բան, որը երբեք գոյութիւն չի ունեցել նրա արժեքային համակարգում, նրա գաղափարախօսութեան շտեմարանում: Պատճառը, պարզապէս, քաղաքական է: Ներկայումս էլ, հայ-բուրժուական դիւանագիտական բանակցութիւնների պայմաններում, որոշակի շրջանակներին ձեռնուուի է Հայաստանի քաղաքական դաշտում Դաշնակցութեանը ներկայացնել որպէս նացիոնալիստական նեղ կուսակցութիւն, գորշգայլական «հայաստաննեան տարբերակ»: Այս քաղաքականութեան դէմ ծառանալը, մեր կարծիքով, ենթադրում է գաղափարախօսական հուժկու պայքար, ազգայինի եւ ազգայնականի տեսական տարբերակման անհրաժեշտութեամբ:

Այս բոլորի լոյսի տակ, որպէս վերջարան, տերմինոլոգիական յստակութեան մի վառ եւ խմաստուն օրինակ մէջ բերենք Ամենայն Հայոց Կարողիկոս, Երջանկայիշատակ Վազգէն Առաջինից. «*Ճարակ կերպով ընդգծենք,- գրում է նա 1972 թուականին,- որ բնաւ պէտք չէ շփորել ազգային գաղափարը ազգայնականութեան մրայնութեան հետ, որ ազգայինի հիսանդագին, այլասերած մէկ դրսեւորումը կը հանդիսանայ, ինչպէս դրսեւուցաւ այդ մեր դարուն նացիզմի եւ ուսիմի մէջ: Շշմարիդ եւ բնական ազգայնութիւնը ոչինչ ունի ընդհանուր՝ ուսիմի եւ նացիզմի հետ, եւ նոյնարան հեռու է անոնցմէ, ինչքան հեռու է, օրինակ, ճշմարիդ գիրութեան ոգին նոյն գիրութիւնը մարդասպանութեանը ծառայեցնողներէն (ընդգծումները մերն են, Կ. Խ.):» (Վազգէն Ա., Կոնդակներ, քարոզմեր, ճառեր, ելոյթներ, Էջմիածին, 1976, էջ 294):*

## ՀՅ Պաշնակցության մուտքը

Սոցիալիստական ինտերնացիոնալ.

*Շփուրգարդի միջազգային*

*սոցիալիստական համաժողովը*

Կարեն Հակոբյան

**Մ**իջազգային սոցիալիստական շարժման վերելքի և 1905 թվականի ռուսական առաջին հեղափոխության անմիջական ազդեցությամբ, ՀՅ Պաշնակցությունը (այսուհետև՝ ՀՅԴ) չբավարարվեց կուսակցության 1892 թ. ծրագրում<sup>1</sup> ամրագրված սոցիալիստական գաղափարների քարոզությամբ և սոցիալիզմի համար պայքարի խնդիրը դարձրեց իր հիմնանպատակներից մեկը: Նման քաղաքականության հետևանքն էր ՀՅԴ կապերի ու հարաբերությունների ընդլայնումը միջազգային սոցիալիստական շարժման և այն դեկավարող Սոցիալիստական կամ Երկրորդ ինտերնացիոնալի հետ:

Հայտնի է, որ դեռևս 1896 թվականին ՀՅԴ-ն հատուկ

ներկայացուցիչ է ուղարկել Լոնդոն՝ Երկրորդ ինտերնացիոնալի 4-րդ համաժողովի հետ հարաբերություններ հաստատելու նպատակով<sup>2</sup>: 1898 թ. կայացած Երկրորդ ընդհանուր ժողովից հետո, երբ ՀՅԴ-ն զարկ տվեց «Եվրոպական պրոպագանին», Արևմտյան Եվրոպայի սոցիալիստական կուսակցությունների ականավոր դեմքերի հետ նրա կապերն ու հարաբերությունները ավելի գործնական քննությ ստացան: Եվրոպական տարբեր երկրների (Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա) խորհրդարաններում ներկայացված սոցիալիստ և սոցիալ-դեմոկրատ պատգամավորները հարցապետումներ արեցին հօգուտ հայկական հարցի, իրենց աջակցությունը հայտնեցին արևմտահայությանը:

Արդեն 20-րդ դարի սկզբներին, ՀՅԴ-ն ներկա էր լինում ոչ միայն

միջազգային սոցիալիստական կոնֆերանսներին, այլև Եվրոպայի խոշոր քաղաքներում կազմակերպում էր ցույցեր և բողոքի գործողություններ:

Միաժամանակ, ՀՅԴ-ն գործնական կապերի մեջ էր նաև Ռուսաստանյան Կայսրության սոցիալիստական ուժերի, առանձնապես՝ Սոցիալիստ-հեղափոխականների (Էսէնների) կուսակցության հետ: Ուստի, միջազգային սոցիալիստական շարժման շարքերում վստահություն ձեռք բերած ՀՅԴ-ն իրավիրվեց 1904 թ. վերջերին Փարիզում գումարված Ռուսաստանյան Կայսրության ընդդիմադիր և հեղափոխական կազմակերպությունների խորհրդաժողովին, որը նպատակ ուներ ցարիզմի դեմ պայքարում համախմբել բոլոր ընդդիմադիր ուժերին<sup>3</sup>:

Գնահատելով ստեղծված իրավիճակը և հաշվի առնելով ՀՅԴ կովկասյան մարմինների հետևողական պահանջները, 1905 թ. փետրվար-ապրիլ ամիսների ընթացքում երկու անգամ իրավիրված ՀՅԴ Խորհուրդը ընդունեց «Նախագիծ Կովկասեան գործունեության» (այսուհետև՝ «Կովկասյան նախագիծ»), որոշելով Անդրկովկասում «...ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափոխական գործունեութեան...»<sup>4</sup>:

Դրանից անմիջապես հետո Ժընում ՀՅԴ-ի, ոուս սոցիալիստ-հեղափոխականների և Լեհական սոցիալիստական կուսակցության նախաձեռնությամբ կազմակերպվեց ցարական վարչակարգի դեմ պայքարող ընդդիմադիր ուժերի երկրորդ համաժողովը, որին մասնակցում էին միայն հեղափոխական կուսակցությունները<sup>5</sup>:

«Կովկասյան նախագծի» ընդունումը, ակտիվ պայքարը ցարական իշխանությունների դեմ և միջազգային սոցիալիստական շարժման հետ ձևավորված սերտ հարաբերությունները չին կարող անարձագանք մնալ: Ուստի, Ամստերդամի 1904 թ. սոցիալիստական կոնգրեսից հետո կանոնավոր կերպով գործող Բրյուսելի

Սիցազգա-յին սոցիալիստական բյուրոն, որը հանդիսանում էր Սոցինտերնի գործադիր մարմինը և հետևում էր սոցիալիստական համաժողովների որոշումների իրականացմանը, 1905 թ. մայիսի 12-ով բվագրված իր նամակով դիմեց ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրօշակի» խմբագրությանը, փորձելով պարզել հարո՞ւմ է արդյոք ՀՅԴ-ն միջազգային սոցիալիստական կոնգրեսների որոշումներին, թե՞ ոչ: Այդ նպատակով, Միջազգային սոցիալիստական բյուրոն խնդրում էր ուղարկել մի պաշտոնական ծանուցում և ՀՅԴ կանոնագրի մի օրինակ՝ հարցի պարզաբանման համար<sup>6</sup>:

ՀՅԴ-ն շիապաղեց և նոյն բվականի մայիսի 17-ին Բրյուսել ուղարկեց իր պատասխան նամակը: Այդ նամակով ՀՅԴ Արևմտյան Բյուրոն հաստատում էր, որ կուսակցությունը հարել է միջազգային սոցիալիզմի գաղափարական սկզբունքներին և 15 տարի շարունակ արծարծել իր տարբեր իրատարակություններում և մասնավորապես՝ պաշտոնական օրգան «Դրօշակում»: Սակայն, այդ ամենը կրել է զուտ տեսական բնույթ, քանի որ ՀՅԴ գործունեությունը իիմնականում կենտրոնացած է եղել Արևմտյան Հայատանում, իսկ այնտեղ համապատասխան հոդ չկար սոցիալիստական

գործունեության համար: Բայց Արևելյան Հայաստանում ուժեղացող հեղափոխական շարժումների վերելքը, ՀՅԴ դեկավարության կարծիքով, նպաստավոր պայմաններ էր ստեղծել նաև սոցիալիստական շարժումը կազմակերպելու համար: Այդ պատճառով, Արևմտյան բյուրոն տեղեկացնում էր, որ ՀՅԴ Խորհուրդը արդեն ընդունել է «Կովկասյան նախագիծը», որտեղ արտացոլված են կուսակցության սոցիալիստական հայցըները:

Նամակի մեջ մատնանշվում էր նաև այն փաստը, որ բացի «Կովկասյան նախագծի» ընդունումից, ՀՅԴ-ն համաձայնություն է ձեռք բերել Ռուսաստանյան Կայսրության սոցիալիստական ուժերի հետ՝ ցարիզմի և կապիտալիզմի դեմ միասնական պայքար կազմակերպելու համար: Միաժամանակ նամակը նախազուշանում էր, որ «Կովկասյան նախագծի» հաստատումը պետք է կատարվի ՀՅԴ առաջիկա ընդհանուր ժողովում, որի մասին խմբագրությունը պաշտոնապես կտեղեկացնի Միջազգային սոցիալիստական բյուրոյին<sup>7</sup>:

Պետք է նշել, որ մինչև ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովի գումարումը,

<sup>1</sup> Տես «Դրօշակ», 1894, օգոստոս, N 10, էջ 1-3; սեպտեմբեր, N 11, էջ 1-4:

<sup>2</sup> Տես Վարանդեան Մ., ՀՅԴ Կաշնակցութեան պատմութիւն, Եր-ան, 1992, էջ 418:

<sup>3</sup> Տես Միջկուսակցային խորհրդաժողովների որոշումները, Ժըն-, 1905, էջ 3-27:

<sup>4</sup> Նիւթեր ՀՅԴ Կաշնակցութեան պատմութեան համար (այսուհետև՝ Նիւթեր), հ. Բ, Պէյրութ, 1985, էջ 231-236:

<sup>5</sup> Տես Միջկուսակցային խորհրդաժողովների որոշումները, էջ 4-27, տես նաև՝ Նիւթեր, հ. Գ, էջ 45-46, Դրօշակ, N 5, մայիս, 1905, էջ 65-69:

<sup>6</sup> Տես Դրօշակ, 1905, յունիս, N 6, էջ 82:

<sup>7</sup> Տես Դրօշակ, 1905, յունիս, N 6, էջ 82-83:

Միջազգային սոցիալիստական բյուրոն ուշիուշով հետևում էր ՀՅԴ գործունեությանը և կապ էր պահպանում ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի հետ՝ տեղեկություններ հաղորդելով սոցիալիստական շարժման ակնառու իրադարձությունների մասին, որոնց լուսաբանումը իրականացվում էր «Դրօշակի» էջերում: Հատկանշական է, որ 1905 թ. սկզբներին, երբ սկսվեց ռուսական առաջին հեղափոխությունը, Գերմանիայի սոցիալ-դեմոկ. կուսակցությունը կազմակերպել էր հանգանակություն՝ Ռուսաստանի սոցիալիստական կուսակցություններին օժանդակեու համար, որից Միջազգային սոցիալիստական բյուրոն մի որոշակի գումար հատկացրեց նաև ՀՅԴ-ին՝ «իբրև մի մարմնի, որ կանգնած է սոցիալիստական պայքարի հողի վրայ»<sup>8</sup>:

Իր հերթին, ՀՅԴ Արևմտյան Բյուրոն, «Դրօշակի»-ի խմբագրության միջոցով, նույնպես մշտական կապ էր պահում Միջազգային սոցիալիստական բյուրոյի հետ: 1905 թ. փետրվարին Բաքվում տեղի ունեցած հայկական կոտորածների հետ կապված, «Դրօշակի» խմբագրությունը 1905 թ. մարտի 10-ին դիմեց Միջազգային սոցիալիստական բյուրոյին, որն անմիջապես դատապարտող կոչ ուղղեց ամբողջ քաղաքակիրք աշխարհի սոցիալիստական կուսակցություններին և նրանց օրգաններին: Մերկացնելով ցարի ջարդարարական նպատակները և կայսրության



Խ. Մարտիրոսյան

տարբեր ազգություններին իրար դեմ գրգռելու քաղաքականությունը, Միջազգային սոցիալիստական բյուրոյի կոչը արձանագրում էր. «Հրեաներին ջարդել տալոց յետոյ, Նիկոլայ Երկրորդի խորհրդականները վերսկսում են հայերի դեմ Արդիվ Համբոյի արիւնու քաղաքականութիւնը, որ Միջազգային Սօց. Բիւրօն մատնել է քաղաքակրթված աշխարհի ցասումին 1901 թվի հոկտեմբերի 18-ին»:

Գործադիր կօմիտեն կարծում է, որ ինքը թարգմանը կը լինի բոլոր սօցիալիստների, վերըստին բողոքելով այն նախամտածված ջարդերի դեմ, որոնց զնի է հանդիսանում դժբախտ հայ ժողովուրդը: Մենք համոզուած ենք, որ դուք կը միանաք մեր բողոքին, առնելով բոլոր այն նախաձեռնութիւնները, որոնք բխում են 1900-ի Պարիզի Միջազգային Սօցիալիստական Կօն-

գրեսի որոշումից»<sup>9</sup>: Կոչը ստորագրված էր Միջազգային սոց. բյուրոյի Գործադիր կոմիտեի կողմից՝ ի դեմս նրա քարտուղար, հոլանդացի Քամիլ Հյուիսմանսի:

1905 թ. ՀՅԴ որդեգրած սոցիալիստական քաղաքականության սկզբների հաստատումը տեղի ունեցավ Վիեննայում 1907 թ. փետրվարի վերջերին սկսված և մինչև մայիսի սկզբները տևած 4-րդ ընդհանուր ժողովում: Այս ժողովը պետք է հաճուցալուծում տար ՀՅԴ Խորհրդի կողմից «Կովկասյան նախագիծն» ընդունելու իրավասության, Կովկասում ինքնապաշտպանությունից հեղափոխական գործունեության անցնելու խնդիրներին, որոնց շորջ բուռն քանակեած էր ծավալել կուսակցության ներսում: Ժողովը երկարատև ու բուռն քննարկումներից հետո հավանություն տվեց «Կովկասյան նախագծին» և ընդունեց «...սոցիալիստական ծրագիրը եւ յեղափոխական տակտիկը»<sup>10</sup>: Բացի այդ, 4-րդ ընդհանուր ժողովում հատուկ քննարկման նմբարկվեց 1905 թ. մայիսի 12-ին «Դրօշակին» ուղղված Միջազգային սոցիալիստական բյուրոյի առաջարկը: Այս հարցը բարձրացրեց Արևմտյան բյուրոյի անդամ Խ. Մարտիրոսյանը (Ակնունիս) Արևմտյան բյուրոյի 1904-1906 թթ. գործունեության տեղեկագիրը (հաշվետվությունը) ներ-

<sup>8</sup> Դրօշակ, 1907, օգոստոս, N 8, էջ 110:


<sup>9</sup> Դրօշակ, 1905, մարտ, N 3, էջ 46:

<sup>10</sup> Նիքեր, հ. գ., էջ 299:

կայացնելու ժամանակ: Նա նշեց, որ այդ տարիների ընթացքում Միջազգային սոցիալիստական բյուրոն միշտ աջակից է եղել ՀՅԴ դիմումներին և դրանց համաձայն՝ իր բողոքի ձայնն է բարձրացրել հայերի դեմ ճնշումներ իրականացվելու դեպքում<sup>11</sup>: Քննելով Խ. Մալումյանի առաջարկը՝ 1907 թվի մայիսի 4-ին կայացած ընդհանուր ժողովի 121-րդ նիստն ընդունեց վերջինիս ներկայացրած բանաձևը՝ այն դարձնելով ընդհանուր ժողովի որոշում. «Յանձնարարել Արևմբութեան Բիւրոյին՝ բանակցութեան մէջ մտնել յիշեալ Բիւրոյի (Միջազգային սոցիալիստական բյուր - Կ. Հ.) հետ, գրաւոր թէ բանաւոր, յայտնել նրան՝ Դաշնակցութեան յարումը միջազգային սոցիալիստական կոնգրեսների որոշումներին և միջոցներ ձեռք առնել ապահովելու Դաշնակցութեան մասնակցութիւնը Միջազգային Սոց. Բիւրոյուն և կոնգրեսներում»<sup>12</sup>:

ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովի ընտրած նոր Արևմտյան բյուրոն պետք է ամեն ջանք թափեր՝ իրագործելու համար ընդհանուր ժողովի այս որոշումը, որը մեծ կարևորություն էր ներկայացնում: Սոցիալիստական ինտերնացիոնալը այն բաղադայի միջազգային ամբիոններից մեկն էր, որտեղից կարելի էր ներկայացնել հայության հիմնախնդիրները, դրանք քննել եվրոպական և համաշխարհային պրոբլեմների ընդհանուր համատեքստում:

Հնարավոր էր նաև օգտագործել Սոցիալիստական ինտերնացիո-



Ս. Վարանյան

նալի կապերը՝ սոցիալիստական կուսակցությունների ու նրանց օրգանների միջոցով տարբեր երկրներում հայկական հարցը արծարծելու և հասարակական լայն շրջանակների սեփականությունը դարձնելու համար: «Ինտերնացիոնալը, - գրում է Վարանյանը, - ամբիոն մըն էր մեզի համար քաղաքակիրք աշխարհի բարձր ու հմայքուտ ամբիոններէն մէկը-ուրկից կ'արծարծէինք մեր ազգային դատը, ձգտելով շահագրգռել մեծ երկրներու ընկերվարական պարագայիւսները հայ ժողովուրդի ճակատագրով»<sup>13</sup>:

ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովից մոտ երեք ամիս անց՝ 1907 թ. օգոստոսին, գերմանական Շտուդգարտու քաղա-

րում, կուսակցությունը հնարավորություն ստացավ մասնակցելու Երկրորդ ինտերնացիոնալի 7-րդ համաժողովին: ՀՅԴ-ն երեք պատգամավորով էր ներկայանալու այդ համաժողովին. մեկը՝ ողջ կուսակցության կողմից՝ վճռական ձայնով, մյուս երկուսը՝ կովկասյան մարմինների կողմից՝ խորհրդակցական ձայներով<sup>14</sup>:

Մինչ Շտուդգարտի համաժողովին մասնակցելը, պետք էր նախապատրաստական աշխատանք կատարել՝ սոցիալիստական ընտանիքին հավոր պատշաճի ներկայանալու համար:

Առաջնահերթ խնդիր էր համաժողովին մասնակցելու համար ներկայացնուցիչների ընտրության հարցը: Մեր ձեռքի տակ եղած փաստերը վկայում են, որ քննարկվող թեկնածուների շարքում եղել են Ռուսումը (Ստ. Զորյան), Ս. Վարանյանը (Հովհաննիսյան) և Ավ. Ահարոնյանը: Սակայն, վերջինս 1907 թ. հուլիսի 23-ին Խ. Մալումյանին գրած նամակում դժոնիում էր. «Շտուդգարտի համար ինձանից ինչ էին սպասում, ես դեռ չեմ հասկացել: Չէ՞ որ Ռուսումը այդտեղ է: Մի խօսքով նամակդ ինձ ժընե բերելու համար քաւական համոզիչ չեր...»<sup>15</sup>:

Ինչպես հետագայում վկայում էր Ս. Վարանյանը, Ռուսու-

11 Տե՛ս Նիւթեր, հ. Գ, էջ 35-36:

12 Նիւթեր, հ. Գ, էջ 289:

13 Վարանյան Ս., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, էջ 418:

14 Տե՛ս «Դրոշակ», Ն 8, օգոստոս, 1907, էջ 110:

15 ԳԱԹ, Ավ. Ահարոնյանի ֆոնդ (Փոխանցված ՀՅ Դաշնակցության արխիվից), գ. 158:



## Delegates to the 1907 Stuttgart Congress.

մը և ինքը մեկնել են Ծովոտգարդի համաժողովին: Սակայն, դեռևս դժվար է որոշել, թե ո՞վ է եղել դաշնակցական պատգամավորներից երրորդը: Իսկ ահա Ռուսումը, համաժողովի սկզբելուց հետո, միքանի օր մասնակցեց նրա աշխատանքներին և մեկնեց այնտեղից: Այդ մասին Մ. Վարանդյանը գրում է. «Ընկերները կը յորդորէին, որ յետաձգէ իր մեկնումը յաջորդ օրուան, անգամ մը լսելու համար ժոռէսին, որ այդ օրն իսկ պիտի արտասանէր իր գեղեցկագոյն ճաներէն մէկը, ամենահրատապ խընդրի մը շուրջ, ընդդէմ Բերէլի, Ֆոլմարի և ամբողջ գերման սոցիալ-դեմոկրատական տակտիկի՝ յատ-

կայէս միլիտարիզմի և պատերազմի նկատմամբ: ... Ռուսումը չէր տեսած աշխարհահշակ թրիբունը, և մեկնելու համար աճապարելու պէտք ալ չուներ: Լաւ չեմ յիշեր, թէ ինչ պատախանեց ընկերներու յորդորներուն՝ օր մըն ալ մնալու: Հեգմական խօսք մըն էր, որ կ'ուզէր ըսել.- «Թողէք հոսկութիւնները»<sup>16</sup>

Թերևս Ռուսումի այդօրինակ վերաբերմունքը կարելի է բացատրել նրանով, որ համաժողովների բնագավառը հոգեհարազատ չէր վերջինիս խիստ գործնական խառնվածքին:

Ծովոտգարդի համաժողովին ներկայացնելու համար Արևմտյան Բյուրոն կազմել էր մի տեղեկագիր, որով համաժողովի մասնակիցները պատ-

16 «Սիմոն Զաւարեան», հ. Ա, Վ. Ալբեան տղ., էջ 28:

17 Տես «Դրույկ», N 9, սեպտեմբեր, 1907, էջ 134-137, տես նաև՝ «Դրույկ», N 12, 1 հոկտեմբերի 1986, էջ 16-19 և N 13, 15 հոկտեմբերի 1986, էջ 13-16:

18 «Դրույկ», N 12, 1 հոկտեմբերի 1986, էջ 17:

19 Տես «Դրույկ», N 12, 1 հոկտեմբերի 1986, էջ 16-18:

կերացում պետք է կազմեին ՀՅԴ 17-ամյա գործունեության վերաբերյալ:

Տեղեկագիրը, որպէս փաստաթուղթ, «Դրոշակում» տպագրվել է թե՛ 1907 թվականին, թե՛ հետագայում<sup>17</sup>, և կազմված էր ըստ ՀՅԴ երկու հիմնական գործելադաշտերի՝ Անդրկովկաս և Օսմանյան կայսրություն, և հիմնավորում էր 1892 թ. ծրագրի դրույթների՝ միջազգային սոցիալիստական շարժման սկզբունքներին համապատասխանության գաղափարը. «Մենք կ'աշխատինք տարածել համայնական սեփականութիւնը և համայնական աշխատանքը, որպէսզի աւելի պատրաստ գլունուինք անցնելու հանրային այն կազմակերպութեան, որ այսօրվաղը պիտի հաստատուի տնտեսապէս աւելի զարգացած երկիրներու մէջ՝ պլուտարիատի յեղափոխութեամբ»<sup>18</sup>:

Այնտեղ նշվում էր, որ շնայած Արևմտյան Հայաստանում տիրող ռազմաֆեոդալական կարգերը հնարավորություն չին ընձեռում սոցիալիստական գործունեության համար, այդուհանդերձ կուսակցությունը իրականացրել է սոցիալիստական քարոզություն՝ իր տարրեր հրատարակությունների միջոցով, ինչպէս նաև կարողացել է չեզոքացնել որոշ քուրդ ավատապէտերի անսահմանափակ իշխանությունը<sup>19</sup>:

Անդրադառնալով կուսակցության կովկասյան գործունեությանը՝ տեղեկագրում մատնա-

նշվում էր 1905 թ. ռուսական առաջին հեղափոխության տարիներին ՀՅԴ քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխության և դրա հիման վրա ձեռնարկված միջազգային սոցիալիստական սկզբունքներից բխող քայլերի կարեվորությունը: Կուսակցությունը համարում էր, որ Անդրկովկասում հայ գյուղացիության շրջանում ստեղծվել են քարենպատ պայմաններ, որոնք «պատրաստ կը դարձնեն ընկալելու ընկերվարական գաղափարներու քարոզչութիւն մը, և յատկապէս հողի համայնացման գաղափարը»<sup>20:</sup> «Քանուրութեան մէջ» քաժնում, մատնանշվում էր 1900 թվականից ի վեր ՀՅԴ կառույցների կողմից կազմակերպված գործադրությունների փաստը: Նշվում էր նաև ՀՅԴ դրոշի տակ գործող քանվորության ընդհանուր քանակը՝ 23.300: Կուսակցությունը ներկայացրել էր նաև իր կողմից ստեղծված արհեստական միությունների պատկերը՝ ըստ նրանց աշխարհագրական տեղաբաշխման և անդամների թվի: Անդրկովկասում ՀՅԴ-ի կողմից կազմակերպվել էին նաև գյուղացիական միություններ:

Ծովուտգարդի համաժողովին ներկայացված տեղեկագրում ՀՅԴ-ն կարևորում էր նաև 1906 թ.

օգոստոսին Էջմիածնում տեղի ունեցած Արևելահայերի (ռուսահայոց) Կենտրոնական ժողովը: Քանզի այստեղ մեծամասնություն կազմող դաշնակցական պատգամավորների անցկացրած քանաձները փաստել են, որ հայ «...ժողովուրդը պատրաստ է արդէն իրականացնելու ընկերվարական նուազագոյն ծրագրի պահանջներուն մէկ մասը դրաբոցներու ամբողջական աշխարհականացում, հողերու համայնացում, կիներու քաղաքական իրավունքներ, իգական սեռի ընդունում՝ կրթական գործի դեկապարման մէջ, և այլն»<sup>21:</sup>

Տեղեկագիրը ավարտվում էր ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովի որոշումների լուսաբանությամբ. «...ամիկա (ընդհանուր ժողովը, - Կ.Հ.) որոշեց շարունակել պայքարը երկու պետութեանց մէջ Դաշնակցութեան դրոշի տակ, և առնել բոլոր գործնական միջոցները՝ միւս բոլոր ընկերվար-յեղափողական տարրերու հետ գործակցութեան հասնելու համար: Միաձայնութեամբ որոշուեցաւ մասնակցիլ ընկերվարական միջազգային համագումարներուն»<sup>22:</sup> Այսպիսով, ՀՅԴ-ն Ծովուտգարդի միջազգային սոցիալիստական համաժողովին էր ներկայացել իր հարուստ գործունեության, այդ թվում՝ սոցիալիզմի համար պայքարի մասին վկայող ամբողջական հաշվետվությամբ:

Ինչպես արդեն նշեցինք, ՀՅԴ-ի

կողմից Ծովուտգարդի համաժողովին կարող էր մասնակցել երեք պատգամավոր, սակայն նման իրավունք էր ստացել միայն նրա ռուսական կայսրությունում գործող հատվածը՝ ռուսական սեկցիայի՝ սոցիալիստ-հեղափոխականների ենթասեկցիայի կազմում: Ընդունում՝ ամբողջ ռուսական սեկցիային տրվել էր 20 ձայն, որից 10-ը՝ սոցիալ-դեմոկրատներին, 7-ը՝ սոցիալիստ-հեղափոխականներին և 3-ը՝ չեղոք արհմիություններին: Բայց մինչև կոնգրեսի սկսվելը՝ 1907 թ. օգոստոսի 16-ին, տեղի ունեցավ Սիցազգային սոցիալիստական բյուրոյի ժողովը, որտեղ ՀՅԴ-ի կողմից հարց բարձրացվեց, որ կուսակցության թուրքիայի հատվածին առանձին ներկայացնուի ունենալու իրավունք տրվի: Նրա նպատակն էր ստեղծել առանձին հայկական սեկցիա, որի մէջ պետք է մտնեին ՀՅԴ երկու հատվածները: Սիցազգային սոցիալիստական բյուրոն որոշեց հետաձգել այդ խնդրանքի իրականացումը՝ մինչև իր առաջիկա նիստը, եթե ՀՅԴ թուրքիայի կառույցի դեկապարմարմինը կներկայացնի համապատասխան տեղեկագիր՝ թուրքիայի հատվածի կազմակերպության և նրա գործունեության վերաբերյալ<sup>23:</sup> Նմանօրինակ ուրոշման

20 «Դրույկ», N 13, 15 հոկտեմբերի 1986, էջ 15:

21 «Դրույկ», N 13, 15 հոկտեմբերի 1986, էջ 15:

22 «Դրույկ», N 13, 15 հոկտեմբերի 1986, էջ 16:

23 ՀՅԴ Թուրքիայի հատվածի մուտքը Սոցիստեր ժեղի ունեցավ 1908 թ. հոկտեմբերին՝ Սիցազգային սոցիալիստական բյուրոյի 10-րդ համագումարում, որը նրան սկսեց 4 ձայնի իրավունք: Տես «Դրույկ», N 9-10, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1908, էջ 151:

վրա թերևս որոշ ազդեցություն էր գործել բոլշևիկների կողմից տարվող քարոզությունը, քանզի նրանք ՀՅԴ-ին փորձում էին ներկայացնել որպես ազգայնական կուսակցություն ու խոչընդոտել նրա մուտքը Սոցինտերն:

«1907 թ.- գրում է Մ. Վարանյանը, նրանց (բոլշևիկների- Կ. Հ.) մի հայ ներկայացուցիչ (խոսքը վերաբերում է Բոգդան Կոնսյանցին- Կ.Հ.) հրատիւած էր ոռոսական սեկցիայի կողմից Ծովութարտի միջազգային կօնգրեսը «յատուկ նպատակով» դուրս մղելու Դաշնակցութիւնը, որի ընդունելութեան խնդիրն էր դրված Ինտենսացիօնալի մէջ»<sup>24</sup>:

Ծովութարդի սոցիալիստական համաժողովի բացումը տեղի ունեցավ 1907 թ. օգոստոսի 18-ին: Ներկա էին տարրեր պետությունների և ազգությունների մոտ 1000-ի հասնող պատգամավորներ: Կոնգրեսը բացեց Միջազգային սոցիալիստական բյուրոյի նախագահ, Բելգիայի սոցիալիստական կուսակցության առաջնորդ Է. Վանդերվելդեն և խոսքը փոխանցեց Ավգուստ Բերելին: Վերջինս ներկայացրեց սոցիալիստական աշխարհում Ամստերդամի 1904 թ. կոնգրեսից ի վեր տեղի ունեցած կարևորագույն դեպքերն ու իրա-



Ա. Բերել

դարձությունները: Ա. Բերելից հետո խոսք վերցնելով՝ Է. Վանդերվելդեն քաջալերանքի խոսքեր ուղղեց Ռուսական կայսրության բոլոր հեղափոխականներին:

Եվ միայն 1907 թ. օգոստոսի 20-ին սկսվեցին համաժողովի կանոնավոր աշխատանքները՝ տարրեր մասնաժողովներում: Համաժողովի օրակարգի կետերն էին. ա) միլիտարիզմը և միջազգային ընդհարումները, բ) փոխարքերությունները սոցիալիստական կուսակցությունների և արհեստական միությունների միջև,

գ) գաղութային քաղաքականություն, դ) աշխատավորների արտագաղթը և ներգաղթը, ե) կանանց ընտրական իրավունքը<sup>25</sup>:

Համաժողովի ամենահրատապ հարցը դարձավ օրակարգի առաջին կետը: Նրա շուրջ ձևավորվեցին իրար հակադիր երկու բևեռներ, որոնց մոտեցումները միմյանցից էականորեն տարբերվում էին:

Ֆրանսիական սոցիալիստների բլոկը՝ Ժ. Ժորեսի և Պ. Վայանի գլխավորությամբ, իրենց առաջարկած քանաձնում առաջ էր քաշում այն միտքը, որ եթե մի պետություն սպառնում է մեկ այլ ազգի անկախությանը, ապա դրանով նա դուրս է գալիս տվյալ ազգի աշխատավոր դասակարգի և ամբողջ միջազգային աշխատավորության դեմ: Եվ այդ պարագայում ազգեսիայի ենթարկված ազգը և նրա աշխատավոր դասակարգը իրավունք ունի պաշտպանելու իր անկախությունն ու ակնկալելու ամբողջ աշխարհի աշխատավորության աջակցությունը: Բանաձեւում միլիտարիզմի կանխարգելման միջոց էր դիտվում աշխատավորության համաժողովրդական ընդվզումը և պայքարը պառամենտական միջոցներով<sup>26</sup>: Այսպիսի մոտեցման դեմ արտահայտվեցին գերմանական սոցիալ-ռեմոկրատիայի ներկայացուցիչները՝ հանձինս Ա. Բերելի և Ֆոլմարի, որոնք իրենց ելույթներում շեշտեցին, որ վերոհիշյալ մոտեցումները կարող են գերմանական սոցիալ-դեմոկրատիայի վրա իրա-

24 Վարանդեան Մ., Հոսանքներ, Ժըն, 1910, էջ 199-200, Տես նաև՝ Իстория второго интернационала, т. 2., М., 1966, р. 204.

25 Տես Իстория второго интернационала, т. 2., р. 204.

26 Տես «Դրույկ», N 8, оғнисну, 1907, էջ 112, Տես նաև՝ Վարանդեան Մ., Ավուս Բերել, Ժըն, 1913, էջ 19-20, Տես նաև՝ Իстория второго интернационала, т. 2, р. 209.

Վիրել Վիլելմ- Բյուլովյան կառավարության զայրույթը, և դեմքեարկեցին այդ բանաձևին: Այս իրավիճակից դուրս գալու համար Է. Վանդերվելդեի և Վ. Աղերի կողմից մշակվեց մի փոխօգումային բանաձև: Նրա բովանդակության մասին «Դրօշակը» գրում էր, որ «...իրաքանչիւր երկրի սօցիալիստները կը շարունակեն ունենալ իրենց յատուկ տաքտիկը, համաձայն իրենց պայմաններին, ցեղական տեմպերամենտին և այն»<sup>27</sup>:

Օրակարգի երկրորդ կետով քննարկման դրվեց սոցիալիստական կուսակցությունների ու արհմիությունների փոխհարաբերությունների կանոնակարգման խընդիրը և ընդունվեց մի բանաձև, որն առաջարկեցին ԱՄՆ-ի սոցիալիստները: Նրա բովանդակության մեջ նշվում էր, որ սոցիալիստական կուսակցությունները և արհմիությունները աշխատավոր դասակարգի ազատագրման գործում համահավասար արժեք ունեն, և այդ ազատագրական կովի հաջողությունը կախված է նրանից, թե որքան սերտ հարաբերություններ կհաստատվեն այդ երկու համազոր գործուների միջև: Պահանջվում էր, որ այդ երկու ուժերը առաջ գնան ներդաշնակ ջանքերով, հանուն ընդհանուր ազատագրության: Բանաձևին ձայն տվեց նաև ոուսական սեկցիան՝ հանձինս

սոցիալիստ-հեղափոխականների, սոցիալ-դեմոկրատների, ՀՅԴ-ի և հրեական Բունդի<sup>28</sup>:

Բնական պետք է համարել ոուսական սեկցիայի նման վերաբերմունքը, քանզի արհմիությունները 1905 թ. Ոուսաստանում սկսված հեղափոխության շարժիչ ուժը հանդիսացող աշխատավոր դասակարգի տնտեսական շահերի պաշտպանն էին: Ուստի ոուսական սեկցիայի մեջ մտնող կուսակցությունները լավ էին գիտակցում վերջիններիս հետ համախորհուրդ աշխատելու կամ նրանց իրենց հակաշորի տակ պահելու խնդիրը:

Համաժողովի օրակարգի 3-րդ կետի հետ կապված առաջ քաշվեց հետևյալ հարցը. արդյո՞ք հարկ է օգտակար ճանաչել գաղութային քաղաքականությունը, որը բարենպաստ վարչակարգի պարագայում կարող է օժանդակել քաղաքակրթության առաջադիմությանը, աշխատավոր դասակարգի և սոցիալիստական շարժման առաջացմանը, թե՞ այն պետք է լիովին վնասակար համարել աչքի առաջ ունենալով գաղութներում տեղի ունեցող բռնությունները: Համաժողովը 128 ձայնով, ընդդեմ՝ 107-ի, վնասակար ճանաչեց գաղութային քաղաքականությունը, որին կողմ քեարկեց նաև համառուսական սեկցիան՝ հանձինս ՀՅԴ ներկայացուցչի:

Օրակարգային կետերը սպառելուց հետո կոնգրեսը ընդունեց Մարոկոյի դեմ ֆրանսիական արշավանքը դա-

տապարտող և Ամերիկայի հանքա-գործ բանվորներին աջակցություն հայտնող և այլ ընթացիկ հարցերը շոշափող բանաձևներ: Զբավա-բարելով համաժողովի հենց սկզբում Է. Վանդերվելդեի կողմից Ոուսաստանի հեղափոխականների հասցեին հնչեցված դրվատանքի խոսքերով, Ծոուտգարդի համաժողովը ընդունեց նաև «...Ոուսաստանի հերոս մարտիկներին, գյուղական և քաղաքային հեղափոխական աշխատավորությանը»<sup>29</sup> իր աջակցությունն արտահայտող հատուկ բանաձև:

Այսպիսով, ՀՅԴ-ն 1904-1905 թվականներին կայուն հարաբերություններ հաստատելով միջազգային սոցիալիստական շարժման հետ, իսկ 1907-ին՝ Ծոուտգարդի կոնգրեսում, անդամագրվելով Սոցիալիստական ինտերնացիոնալին, դարձավ սոցիալիստական շարժման առաջատար ջոկատն Անդրկովկասում, իսկ քիչ անց նաև՝ Օսմանյան կայսրության տարածքում և Իրանում:

Սոցինտերնի լիիրավ անդամի կարգավիճակը հնարավորություն տվեց ՀՅԴ-ին հայկական հարցը և հայ ժողովրդի առջև կանգնած այլ իրատապ խնդիրները բարձրացնել ու քննարկել այնպիսի քաղաքական քեմի վրա, որը տվյալ պատմաշրջանում հասու չէր հարևան ժողովուրդներից որևէ մեկին:

27 «Դրօշակ», N 8, օգոստոս, 1907, էջ 112:

28 Տե՛ս «Դրօշակ», N 8, օգոստոս, 1907, էջ 113:

29 Зайдель Г., Очерки по истории второго интернационала, Прибои, 1931, с. 54.

# **ՃԵՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԱԾԵՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄԱԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ**

ՈՒՐԵՆ ՆԱՐԱՏԱԿՅԱՆ

**Թ**րիլիսիի (նախկին՝ Տփոլիս, Թիֆլիս) Նորաշենի Սք. Աստվածածին եկեղեցու հիմնախնդիրը ներկայումս ստացել է արդիական հնչեղություն և սպառնում է վերածվել ազգամիջյան լուրջ ընդհարման:

Խորհրդային դժնիակ ժամանակաշրջանը ծանր և լուրջ փորձություն էր ինչպես շատ եկեղեցիների, այնպես էլ Նորաշենի համար: «Արմյանսկի բազար» փողոցի վերակառուցման պատրվակով կառույցը որոշում են քանդել, և ճարտարապետ Ն. Սևերովի համար ջանքերով հաջողվում է այն փրկել<sup>1</sup>: 1930-ական թվականներին Նորաշենը դադարում է գործել, իսկ այնուհետև վերածվում պահեստի և գրադարանի:

Վիրահայության ոչնչացման կամ դուրսմղման և հայկական քաղաքակրթության ժառանգության վերացման հստակորեն մշակված քաղաքականությունն սկիզբ է առել դեռևս վրաց մենշևիկների տիրապետու-

թյան շրջանում՝ 1918-1921 թթ.: Ի. Ստալինի և մանավանդ Լ. Բերիայի ջանքերով 1930-ական թվականներին մահվան են դատապարտվում հայ անվանի բազում ազնվականները ու մտավորականները: 1930-1940-ական թվականներին քանդվում են Թրիլիսիի բազմաթիվ հայոց եկեղեցիներ՝ Կուկիայի Սք. Աստվածածին, Հավլարարի Սք. Գրիգոր Լուսավորիչ, Զրկինյանց Սք. Գևորգ, Խարբուլիսի Սք. Սարգիս, Քամոյանց Սք. Գևորգ, Հարանց վանքի, Հրեշտակապետաց, Մետենի Սք. Վարդան, Նավթլուղի Սք. Գևորգ, Խոջիվանքի Սք. Աստվածածին և այլ եկեղեցիներ:

Ավերումների հաջորդ փուլը վերաբերում է 1980-1990-ական թվականներին. Վրացականացվում են Վե-

<sup>1</sup> Ս. Կարապետյան, Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները (1988-1998), Երևան, 1998, էջ 11-12:



րայի Սր. Խաչ, Քարափի Սր. Գևորգ, Կուսանաց Սր. Ստեփանոս, Շուղուրեթի Սր. Աստվածածին, Զարիվայրի Սր. Կարապետ, Բեթղեհեմի Սր. Աստվածածին և այլ եկեղեցիներ: Զորաբաշի Սր. Գևորգը քանդվեց, իսկ Շամբորեցոց Սր. Աստվածածինը պարզապես պայթեցվեց (պատրվակը երկրաշարժն էր): Ահա այսպիսի սահմոկեցուցիչ և քշնամական մքնուրու է տիրում Վրաստանում, որը մշակութային ցեղասպանություն է:

Այս խորապատկերի վրա աշխուժանում են Նորաշենի եկեղեցու վրացականացման ջանքերը, որոնք առավել նպատակալաց են դառնում 1994-1995 թթ.: Դա կատարվում էր իր թե նորոգման անհրաժեշտությամբ և գաղտնի կերպով՝ տեղի հայերից բարցնելով այդ հանցագործությունը: Վերացվում էին հայոց եկեղեցուն քնորոշ հատկանիշները՝ բեմը, քարե մկրտարանը, խաչքարերը, հայերեն արձանագրությունները և այլն:

1990-ական թվականներին ոչնչացվում են Սկրտում Հովհաննեսի և Հովհաննյան դպրոցի ներկայացուցիչ Միրզյանի 19-րդ դարի որմնանկարները: Ի վերջո, 1995 թ. Նորաշենը զավթեցին Հայ առաքելական եկեղեցուց և օծեցին Վրաց ուղղափառ եկեղեցու ծիսակարգով՝ տալով «Խարեբա» (թարգ.՝ Ավետյաց) օտարահունչ անունը:

Այս չսված բարբարոսությունը ծայրահեղորեն սրում է մքնուրությունը և ոտքի հանում թիֆլիսահայերին՝ կորողի օրինական տերերին: Ստրկամտության պայմաններում այսպիսի ընդվզումը անսպասելի էր վրացիների համար, ուստի նրանք հարկադրված էին ժամանակավորապես դադարեցնել կամայականությունները և ապօրինությունները: Մանավանդ, որ 1995 թ. Թիֆլիսի էր ժամանել Էջմիածնի պաշտոնական պատվիրակությունը՝ հայոց եկեղեցու շահերը պաշտպանելու համար: Սակայն հայ պատվիրակները ներկայացել էին ձեռնու-



նայն և անպատրաստ, քանի որ հասու չէին հիմնախնդրի էռությանը: Դրա պատճառով էլ հարցի լուծումը հայտնվեց փակուղում. վրացիների հմուտ սադրանքով այն առկախվեց՝ մինչև գիտնականներից և հոգևորականներից կազմված հանձնաժողովի որոշումը: Կարծում ենք՝ շատ կարևոր է հետևյալ հանգամանքը. հայկական կողմը պետք է խուսափի նման գաղափարից, քանի որ հուշարձանը անվերապահորեն հայկական է, և այս հնարքը մոլորեցնելու միջոց է: Այս անորոշ և կրավորական դիրքորոշումը հետագայում քևավորում է վրացական կողմին:

Եվ ահա 2008 թ. մայիսին վերսկսվում են Նորաշենի Սր. Աստվածածին եկեղեցին յուրացնելու դիվային փորձերը: Վրաստանի պատրիարքարանի քաղաքան թևի, որը հիշեցնում է հակահայկական գործունեության շտաբ, ցուցումով արդեն չարագործության խորհրդանիշ դարձած հայր Տարիել Սիկինչելաշվիլին գործի է անցնում: Վերջինս ձեռնարկում է նոր կամայականություն. եկեղեցին ու հարող տարածքները անջրպատում է քարաշեն պարսպով՝ վրացական եկեղեցուն

բնորոշ խորհրդանիշներով: Նա նաև հայտարարում է, որ մտադիր է կառույցի ներսում «վերականգնողական» աշխատանքներ իրականացնել և այնուհետև վրացական ծիսակարգով արարողություններ կատարել<sup>2</sup>:

Վանդալիզմի քայլերը հաջորդում էին մեկը մյուսին: Այսպես, 2008 թ. նոյեմբերին փորձ է արվում վերացնել եկեղեցու տարածքում ամփոփված Միքայել և Լիոնա Թամամշյանների գերեզմանները, ովքեր եղել են իրենց հարազատ եկեղեցու քարերարները: Սակայն թիֆլիսահայերը համախմբված և համառ ջանքերով կարողանում են կանխել այդ վայրագությունը և վերականգնել շիրիմները: Միջամտում է նաև մարդու իրավունքների պաշտպան Ս. Սոբարիի գրասենյակը: Դրա հետևանքով՝ հայր Տարիելին կանչում են պատրիարքարան և իբր թե նկատողություն անում, ինչն ավելի շուտ քատերական ներկայացում է հիշեցնում: Պաշտոնական քողոք է հայտնում Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն սրբազան Սիրզախանյանը:

Թերևս, անհանգստությունը և մտահոգությունը լիովին հիմնավորված են: Այդ է պատճառը, որ Ամե-

նայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը ամեն շանք գործադրում է եկեղեցին գործող դարձնելու համար: Հիմնախնդիրը միջազգային լայն արձագանք է ստանում, և Հայաստանյաց եկեղեցու արտերկրի թեմերը կազմակերպված պայքար են ծավալում հարցը դրական լուծելու նպատակով:

Այս անգամ տեղի ունեցան նախադեպը չունեցող իրադարձություններ. արդյունավետ լորրինզի շնորհիվ ՀՀ իշխանությունները ոչ միայն անարձագանք չքողեցին Նորաշենի հիմնախնդիրը, այլև դիմեցին եռամդուն քայլերի: Հիմնահարցը հնչեց Ազգային ժողովում, իսկ դեկավարները գործուն կերպով հետամուտ եղան խնդրի լուծմանը:

Դեպքերը զարգանում են սրբնիք արագությամբ և անկանխատեսելի ընթացքով: Թիֆլիսահայերի համբերության բաժակը դարձյալ լցվում է, և նրանք 2008 թ. դեկտեմբերի 10-ին բողոքի ցույց են կազմակերպում Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության շենքի առջև: Նմանօրինակ գործողությունն անցանկալի էր: Հենց այդ օրը Թիֆլիսի է ժամանում ՀՀ կառավարական պատվիրակությունը՝ վարչապետի գլխավորությամբ: Հայ պաշտոնյաներն այցելում են Նորաշեն, մտնում եկեղեցի և մոմեր վառում: Թեմակալ Միրզախանյանը պատարագ է մատուցում և աղոթք հղում առ Աստված:

Վրացական մամուլը համակողմանիորեն, բայց խիստ թշնամանքով և ատելությամբ անդրադառնում է այդ դեպքերին: Բանից պարզվում է, որ Նորաշենի եկեղեցու «դրուր ջարդելուն» մասնակցել են նաև վրացի պաշտոնյաներ՝ համայնքային հարցերի պետական նախարար Յ. Գագոշիձեն և շրջակա միջավայրի ու քննության պաշարների պահպանության նախարար Գ. Խաչիձեն: Այս առնչությամբ խորհրդարանի պատգամավոր Զ. Բաղարթիան մեղադրում է և պահանջում

նրանց պաշտոնանկությունը: Նրանք իբր թե հարքած են եղել և օգնել են հայկական պատվիրակությանը<sup>3</sup>:

Կրկին ասպարեզում է հայտնվում հայոց պատմության և մշակույթի հայտնի կեղծարար «հայագետ» Բոնդը Արվելաձեն: Վերջինս պնդում է, թե եկեղեցին ապօրինի կառույց է, քանի որ գոյություն չունի Վրաց բագավորի թույլտվության մասին որևէ փաստաթուղթ: Բացի դրանից, Վրաց ուղղափառ եկեղեցու ինքնազիւթյան վերացումից հետո ուստի էլզարիսը բալանել է վրացական եկեղեցիները և դրանք հանձնել... հայերին: Հետևաբար, հայկական կողմը իրավունք չունի պահանջել այդ եկեղեցին<sup>4</sup>:

Արվելաձեն վրացիների վանդալիզմը ինչ-որ ձևով պարտակելու համար խուսանավման հնարք է քանեցնում՝ հայերին մեղադրելով վայրենության և նեճության մեջ: Ըստ նրա՝ եկեղեցիների հարցը հայկական իշխանությունները առաջ քաշեցին 2008 թ. օգոստոսյան ուսւ-վրացական պատերազմից հետո, երբ Վրաստանը ծանր վիճակում էր: Հենց այդ հանգամանքից օգտվելով՝ հայկական կողմն ստացավ Սեղմ-Երևան-Նինոծմինդա-Ախալքալաք-Ախալցիխե-Բաքում ավտոմայրուղու կառուցման իրավունքը: Իսկ ՀՀ պաշտպանության նախարարն էլ իբր թե սպառնացել է վրաց իր գործընկերոջ՝ եթե վիճահարույց եկեղեցիները հայերին չտրվեն, ապա Զավախեթին կվերածվի երկրորդ Արխագիայի<sup>5</sup>:

Ավելացնենք, որ վրացական մամուլը պարզապես հեղեղված է հակահայկական նյութերով, իսկ ազգային խորականությունը պետական քաղաքականություն է: Օրինակ՝ անսքող լայիրշությամբ շեշտվում է այն միտքը, որ վրաց պատրիարքը պետք է պաշտոնավարի... Արք. Էջմիածնում:

Մեզանում խսպան բացակայում են հայ-վրացական բարդ ու խճճված փոխհարաբերությունների մա-

<sup>2</sup> «Ազգ», 17.05.2009:

<sup>3</sup> «Ալիա» (Վրաց.), 10-12.01.2008, «Ախալի թառբա» (Վրաց.), 10.01.2008, «Ռեզոնանսի» (Վրաց.), 10.01.2008:

<sup>4</sup> «Սաքարթվելու ռեսպուբլիկա» (Վրաց.), 17.12.2008:

<sup>5</sup> Նույն տեղում:

սին հայեցակարգը, համալիր և համակարգված մոտենումները: Եվ այս վիճակը հաճախ է մեզ անակնկալների առջև կանգնեցնում: Այսպես, մեզ համար խիստ անսպասելի էր վրացիների հերթական քայլը. ի պատասխան հայերի ձգտումների՝ վրացիները հանրահավաք կազմակերպեցին Վրաստանում ՀՀ դեսպանատան մոտ և պահանջեցին իրենց հանձնել ՀՀ ներկայիս տարածքում եղած «Վրացական» եկեղեցիները: Խոսքը Լոռիում կառուցված քաղկեդոնական եկեղեցիների մասին է (Ախրալայի Սր. Աստվածածին վաճք, Խուճապի վաճք, Հնեվաճք, Քորայրավաճք և այլն): Այդպիսի կորողների թիվը տասն է: Բողոքի գործողությունը կազմակերպել էր «Ազգային-քրիստոնեական շարժում» կուսակցության դեկավար Գիորգի Անդրիածեն<sup>6</sup>: Ի դեպ, դեռևս 2006 թ. փետրվարի 6-ին Վրաց ուղղափառ եկեղեցու կաթողիկոս-պատրիարք Իլիան, առանց Էջմիածնի Մայր աթոռի թույլտվության, ինքնազլուխ ձևով ստեղծեց Տաշիր-Չորագետի թեմը, որը վկայում է վրացիների ընդգծված ազրեսիվության և մեծ ախտրժակի մասին: Իսկ արդեն մարտին Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը դատապարտեց այդ որոշումը:

Այս հիմնախնդրի առնչությամբ ճշմարտությունը միակն է և անբեկանելի. քաղկեդոնական հայերի պատմամշակութային շերտը հայոց քաղաքակրթության անկապտելի և օրգանական մասն է: Ուստի այդ մեծարժեք հուշարձանները կառուցել են հայի գենոտիպ, հոգեկերտվածք և մտածողություն ունեցող մարդիկ, ովքեր քաղաքական ինչ-ինչ նկատառումներով գործածել են վրացերեն և դավանել ողջափառ կրոն: Այս առնչությամբ արձանագրենք այն իրողությունը, որ գոյություն ունեն նաև կաթոլիկ, ավետարանական, մահմեդական (նաև քուրքախոս) հայեր, ովքեր ևս իրենց ծնող ազգի անքաժան մասն են: Քաղաքակրթական հսկայական նշանակություն ունեցող նմանօրինակ հիմնադրույթի անտեսումը մեզանում հետևանք է ուազմավարական մտածողության բացակայության:

Այս առումով պետք է լուրջ ուշադրություն դարձնել Ամենայն հայոց կաթողիկոս Աքրահամ Ա Աղքարանեցու (607-615 թթ.) շրջաբերականի վրա, որը արգելում էր հայերին վրացիների եւտ որևիցե հարաբե-

րություն հաստատել, բացի առևտրից<sup>7</sup>: Սա այժմ հընչում է խիստ արդիական և սրափեցնող, որն անտեսել հնարավոր չէ: Մենք մշտապես առնչվում ենք հակահայկական տեղեկատվական տեխնոլոգիաների, վտանգների և մարտահրավերների հետ:

Իսկ վրացու ավերող և յուրացնող ազգային բնավորությունը դրսևորվում է նաև Վրաստանում բնակվող այլ ժողովուրդներին պատկանող հուշարձանների սեփականացման բազում փաստերում: Այսպես, 1833 թ. պատմական մի վավերագրի համաձայն՝ Նորաշենի հարևանությամբ գտնվող «Զվարիս մամա» վրացական եկեղեցին նախկինում եղել է հունական «Երուսաղեմի խաչվերաց» անվամբ և կառուցվել է 1515 թ.: Եկեղեցու բակում էին քաղված անվանի մարդիկ, ինչպես գերմանացի արքայազն Էռնեստ Ռեյնֆելսկին, զաղունի խորհրդական, կոմս և զիտնական Ապոլոս Մուսին-Պուշկինը և այլք: Այս ամենը վրացիների ձեռքով բարբարոսաբար ավերվել է: Եվ սա միակ դեպքը չէ: Նշենք, որ վերջին տարիներին վրացական ծեսով են օծվել հունական 3, ոուսական 2 և կաթոլիկ 5 եկեղեցի:

Արդ, խորամուխ լինենք հիմնախնդրի էռթյան մեջ և մեզ համար ճշտենք անելիքներն ու տրամաբանական քայլերը: Սրա հետ կապված մարտահրավերները շատ լուրջ են և սպառնում են ազգային մեր ինքնությանն ու պետական անվտանգությանը:

Նման բարդ իրավիճակում պարտադիր և անհրաժեշտ է համակարգային կազմակերպված պայքար: Ակնհայտ է, որ Վրաստանում Թուրքիայի նման առկա է խորքային պետություն, որը մենշևիկների ժամանակներից սկսած գործում է նպատակալաց և ծրագրված ձևով: Մինչդեռ մենք այս երկիրը դիտարկում ենք որպես բարեկամ քրիստոնյա պետություն, ինչը խոր մոլորդություն է: Մեզանում բնավ էլ հասու չեն վիրահայության գործունեությանը և շուտափույթ լուծում պահանջող հիմնահարցերին:

Ընդ որում, հայոց եկեղեցիների վրացականացու-

6 «Ռեզոնանսի» (վրաց.), 11.12.2008:

7 Ն. Մառ, Քայ-վրացական յարաբերությունների մասին անցեալում, Թիֆլիս, 1898, էջ 6-7:

մը համոզիչ և հիմնավորված ներկայացնելու համար մանրակրկիտ ձևով մշակվել է մի ամրող հայեցակարգ, որի հեղինակներից մեկն է գիտական շրջանակներում ոչ անհայտ «հայագետ» Բոնդը Արվելաձեն: Ըստ վերջինիս պնդման՝ ճախսկինում հարյուրավոր վրացական եկեղեցիներ վերածվել են հայկական կոքողների: Այս գործընթացը տեղի է ունեցել երկու շրջափուլով՝ հնագույն ժամանակներից մինչև 1801 թ. և 19-20-րդ դդ.:

Նա խոսում է գիտական չափանիշները պահպանելու և ճշմարտությունը ներկայացնելու մասին, բայց հենց ինքն էլ լկտիորեն խախտում է դրանք և զբաղվում պատմաշինարարական վարժանքներով: Այսպես, «գիտնականը» իրամցնում է Թիֆլիսի եկեղեցիների մասին փաստերը, բայց նենգափոխելով ամեն ինչ՝ նշում է «Թրիլիսի» անվանումը: Իսկ ճշմարտությունն այն է, որ վավերագրերում և եկեղեցական արձանագրություններում քաղաքը հիշատակվում է կամ «Տփիլս», կամ «Թիֆլիս» ձևով: Ըստ որում, առաջին ձևը վաղնջականն է, հնագույնը, իսկ երկրորդը հետագա ժամանակների արդյունք է: Այս առումով աչքի է զարգում մեկ ուշագրավ օրինաչափություն. Հայ առաքելական եկեղեցու պաշտոնական փաստաթղթերում այն նշում է «Տփիլս» տարբերակով՝ պահպանելով պատմական ավանդույթը և ժառանգորդական կապը:

Այսպիսով, «Թիֆլիս» ձևը ծագում է «Տփիլս» տարբերակից և լեզվական հետազա ձևափոխումն է: Եզրերիկ (քաքնագիտական) հետազոտությունները պարզում են, որ «տփ», «տափ», «տապ» արմատը սերում է «տապանակ» բառից և նշանակում է արարչական իմացության գանձարան: Իսկ «իս» վերջածանցը ցույց է տալիս բնակավայր և հայերենին բնորոշ լեզվական իրողություն է: Ըստ այդ տեղեկությունների՝ Տփիլսը հնուց անտի եղել է հայ քրմության կենտրոն: Սա մեզանից խնամքով և հասուկ միտումով քացվում է: Այս ամենը վրացու և վրացերենի հետ անզամ հեռավոր առնչություն չունի: «Թրիլիսի» անվանումը կյանքի է կոչվել սուսկ 1936 թվականից:

Բ. Արվելաձեն հայկական պատմամշակութային շերտի վրացականացումը արդարացնելու և գիտա-



կան տեսք տալու համար փորձում է դիմել իրավական կեղծ հիմքերի: Նա, առանց այլևայլության, պնդում է, որ Վրաստանի տարածքի հայոց եկեղեցիները ապօրինի են, քանի որ... չունեն Վրաց քագավորի կամ կաթողիկոս-պատրիարքի պաշտոնական թույլտվությունը: Բացարձակապես անհեթեք ու հիմնագույք դատողություն, որի նպատակն է քողարկել վրացական կեղծարարությունները: Ինչպես ասում են՝ սուտը երկար կյանք չունի և դատապարտված է հենց սկզբից:

«Հայագետի» տրամաբանությունը խիստ խոցելի է և բավականին պարզունակ՝ շղարշված գիտականության կեղծ չափանիշներով: Այսպես, հայկական որևէ եկեղեցու վերակառուցումը կամ վերականգնումը նա անվերապահորեն դիտարկում է որպես «վրացական» եկեղեցու սեփականացում, հայկականացում: Դեռ ավելին, նա պնդում է, թե իբր հայերը մշտապես օգտվել են օտար ասպատակիչների ավերածությունների հանգամանքից, երբ Վրաստանը գտնվել է շատ ծանր վիճակում: Մեղադրանքը իրեշավոր է և թշնամական: Ստացվում է, որ օտար տիրապետության շրջանում հայերը կամ խլել են, կամ էլ գմել վրացական եկեղեցիները: Հետևաբար, այժմ «արդարության մարտիկ» վրացիները պետք է դրանք

վերադարձնեն և վերականգնեն «պատմական ճշմարտությունը»:

Այս գործելակերպով Բ. Արվելաձեն անպատկառ ձևով վարկաբեկում ու սևացնում է քաղաքակրթություն ստեղծող և ամենուրեք տարածող հայերին՝ ծով հայելու մեջ ներկայացնելով մեր ժողովրդի պատմությունը: Այս պահվածքը լավ մտածված ու մշակված հայեցակարգի արդյունք է և նպատակ ունի խարարել հայոց քաղաքակրթությունը:

Ըստ նրա եզրակացությունների՝ Էջմիածինը (այսինքն՝ Հայ առաքելական եկեղեցին) «վրացական» եկեղեցիները զավթելուց հետո ժամանակին համատարած ձևով «հայացրել ե» վրաց ծխականներին (մոտ 200 հազար հոգի): Այս գործողությունները իրականացնում էին հայ տերտեր-էմիսարները<sup>8</sup>: Իրականում մշակվել է վրացիներին ծովելու մասին կեղծ ու պատիր մի հերյուրանք, որպեսզի օրինական և իրավական տեսք տրվի Վրաստանում իրականացված և ներկայում շարունակվող հայերի ծովման գործընթացին, ինչը հասցված է պետական քաղաքականության մակարդակի: Մեծ վտանգ ներկայացնող այս երևույթը չի արժանանում պետական առումով մեր հակահարվածին:

Պատշաճ և տեղին ենք համարում արձանագրել արսիոմի արժեք ունեցող հետևյալ հիմնադրությը. ըստ գիտական լրջմիտ հետազոտությունների՝ Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրանն է<sup>9</sup>: Պատմական սկզբնաբյուրների համաձայն (Չումերական, եզիպտական, աքքաղական, խեթական, պարսկական, հունական, հոռնեական, արաբական և այլն)<sup>10</sup> այս տարածաշրջանում հազարամյակներ շարունակ եղել է ընդամենը մեկ պետություն՝ Մեծ Հայքը: Վիրքը (Վերին Երկիր) ոչ թե էրնիկ նկարագրով օժտված երկիր էր, այլ պարզա-

պես Մեծ Հայքի մեկ նահանգը, որը հետազայում արհեստականորեն, հակահայկական գաղտնի ծրագրի իրագործման մութ ու նենգ միտումով, վերածվել է առանձին պետության:

Բացահայտենք մեկ ճշմարտություն ևս. Վրաստանը մշտապես կառավարել են հայկական արքայատոհմերը՝ Արշակունիները, Խոսրովյանները, Բագրատունիները և այլք: Հետևարար, հայերն այստեղ ապրել և գործել են իրենց տանը և ունեն պետականակերտ կամ պետականաստեղծ կարգավիճակ: Այս տարածքում իրենց ազգաշահ գործունեությունն են ծավալել հայ ազնվական և իշխանական տոհմերը՝ Դատյանները, Զաքարյանները, Օքելյանները (Օքելինները), Բեկրաբեկյանները, Բեկրությանները, Թումանյանները, Թամամշյանները, Փիրոյանները, Ենիկոլոփյանները և այլք: Այնպես որ, նշանակած քաղաքակրթական տարածքում վրացիներին ոչինչ չի մնում: Հօդս է ցնդում նաև հայերի եկվորության և Վրաստանում սուկ հյուր լինելու սին ու փուշ առասպելը:

Պահպանված արխիվային վավերագրերը ակնհայտ կերպով վկայում են Նորաշենի կորողի հայկական լինելու մասին: Այսպես, սկզբնաղբյուրներից մեկը փաստում է. «Ի թուին ԶԺԶ-ին: [Յանունն Աստուծոյ] ես՝ Սատարս մուլքս շինեցի զեկ[ե]ղ[ե]ցի՝ յիշ[ա]տ[ա]կ ինձ և ծնողացն իմոց՝ հօրն իմոյ պ[ա]ր[ն]ն Սոլտանին և պապուն իմոյ պ[ա]ր[ն]ն Թաւաքալին, և կողակցոյն իմոյ Վիշելին, [որդոցս] Նարիմանին, Սոլտանին և Շարիմանին»<sup>10</sup>: ԶԺԶ-ն 916 թվականն է, որին գումարում ենք 551 և ստանում Նորաշենի կառուցման թվականը՝ 1467:

Հայոց այս եկեղեցու մասին համակողմանի տվյալներ կան պատմության էջերում: Հիշատակենք քազմաքիվ փաստաթղթերից մեկը: 1816 թ. հունիսի 24-ին եկեղեցու գրանցամատյանում (դավթար) արձանագրված են նվիրատու քարեպաշտ թիֆլիսահայերի անունները,

8 Բ. Արվելաձե, “ Տուն առաջնային պատմություն” .- Հայաստան, 2006.

9 Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան, Քայագիտական գիտաժողով (գեկուցումներ, 13-15 նոյեմբերի 2003), Երևան, 2004: Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան, Քայագիտակրթություն և պետականություն, Գիտաժողով-2, 17-19 փետրվարի, Երևան, 2005:

10 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 125, թ. 3ա



ՀՀ վարչապետ Տ.Սարգսյանը Նորածեմում

այդ թվում նաև՝ Սիմոն, Ավետիք, Պետրոս, Սոլոման, Դավիթ Թամամշյանները<sup>11</sup>: Եկեղեցաւեր և բարերար ծխականների շարքում նշված են նաև կանայք՝ Քերևան Ղորդանյանցը, Մարտն Դաբաղյանցը, Մայեն Կակինյանցը, Թիմաքին Մելիքյանցը և այլք<sup>12</sup>: Ուշագրավ է հատկապես այն փաստը, որ Սր. Աստվածածին Եկեղեցուն ընծաներ են մատուցել ոչ միայն թիֆլիսահայերը, վիրահայերը, այլև երևանցիները (Մեսրոպը, Կիրակոսը), վանեցիները (մահտեսի Գասպարը, Խաղոն), մոզդոկցիներ, գանձակցիներ, քավրիցիներ և այլք: Այսինքն՝ Եկեղեցին եղել է համահայկական ուշադրության և հոգածության ծիրում:

Մեծ համբավ և ճանաչում ունեցող այս շինությունը տարբեր ժամանակներում բազմից նորոգվել է: Այսպես, 1650 թ. այն վերակառուցել է Խոջա Նազարը, 1795 թ.՝ Մելիք-Ավետիք Բեհբությանը և Գրիգոր քահանան,

1808 թ.՝ գործակալ Տեր-Ղազարը և Մունքոյանը, 1875 թ.՝ Ներսես կաթողիկոսը, 1897 թ. և 1900 թ.: Այսինքն՝ Եկեղեցին եղել է խնամքի և աջակցության առարկա:

Միուն բանիվ, Նորաշենի Սր. Աստվածածին Եկեղեցու հիմնախնդիրն արտացոլում է քաղաքակրթական պատերազմի օրինաչափություններն ու սկզբունքները: Ուստի, խիստ արողիական է այս առումով հիմնահարցի խորագնին ուսումնասիրությունը: Մինչդեռ մենք անիմաստ ձևով հապաղում ենք և կորցնում թանկագին ժամանակը:

11 Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 29, վավ. 159, թթ. 1-3:

12 Նույն տեղում, թթ. 4-5

# ՎԱՆԵ

## ՀԻՆ ՈՒ ՆՈՐ

### ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ

### ՄԻԶԵՎ

*National Geographic ամսագրի 1919-ի  
օգոստոսի համարում լրագրված  
Մայեր Օուեն Ուիլյամսի հոդվածը*

**Q**ործողության վայրը՝ Վան, դասմական Հայաստանի մայրաքաղաք, ինչի աղացույցները բաղադրի պատմության մասնաւոր հաջորդությունների շառական համար:

Ողբերգության հետեւը տեսանելի են յուրաքանչյուր ավելված տակ, սակայն հեռավոր անցյալը դեռևս դադարեցած է իր ցնցող հմայքը: Զախ կողմում՝ հարավարևմուտքում, ձյունածածկ լեռների կախարդական ողբան Հայաստանը բաժանում է Տիգրիսի հովտից:

Մեր առջև Վանա լճի սրանչելի ծփանցն է՝ Նեմրութ լեռան խառնարանաձև գագաթի հետ, որը բառասուն մղոն հեռվից մուտքում է երևում: Մի քայլ հյուսիսի Սիփանի նրազեղ

գագաթն է, որտեղ Նոյի տաղանք սկզբից փնտրեց հանգըրքան, սակայն այդ ալեհեր գագաթը սփիղված էր այդ դաշիվը զիջել մյուսին՝ ավելի հզորին, որն ավելի հյուսիս է՝ Արարատին:

Մուգ տագանակագույն ժաղավենը հատում է ձյունաղաց տարածքը, այստեղով է անցնում նահանջի ուղին՝ ձանալարի դեմի մահացու սվերների հովիտը:

Իմ դարտականությունների մեջ մասնաւում էր հրդեհված սների մնացորդներից բարաֆների կառուցումը, այն սների, որտեղ ոչ այնան վաղուց մետախյա վարագույրներն ու ընիր գորգերը հաղորդում էին արևելյան ճոխության սլացը. Շեն այն սների և այգիների բաղադրի, որտեղ հյուրներ հայ կանայք ձեռքի աշխատանքով էին վասակում իրենց աղբուսը:

Մի հսկայական տան մեջ, որտեղ շամ մարդիկ էին հավաքվել, վարդեսները դուռ ու լուսամուտ էին տեղադրում, որդեսզի այդ ողորմելի կացարանը դառնա դիմանի աղբելու համար: Մարդկում, լվացվում ու սանրվում էր տննաներով բուրդ, որ անհրաժեշտ էր հազուս գործելու համար, որդեսզի և կարացած կանայք դաշտանվեն ցրցից:

Ամերիկյան օգնության միությունը աշխատում է այստեղ, որտեղ աղաքա խաղաղության հույսը բքացնում է տանջալից ցավը, որտեղ ոտարքիկ երեխաները դժվարությամբ են անցնում սառած ձյան վրայով, ժողովով քափահարելով փոքրիկ, սևացած կաթսաները, ինչով նրանի հույս ունեն գտնելու մի քիչ ջրալի ձաւ, որդեսզի քարախեն սև հացը...

Մենք նահանգաղետի հետ լավ բարեկամներ ենք: Երիսասարդ տարիներին նա Բուսոնում աշխատել է վերելակավար և այստեղ էլ իր բարյացակամ հաճախորդներից սովորել է անզերեն:

Այսուհետև նրա դարտականությունների մեջ է մասնաւում դեկավարել այստեղ հավաքված դժբախս հայերին, մինչև դասերազմը կավարտվի միացյալ տերությունների հաղթանակով և վերջադես խաղաղություն կիշնի այս թանկագին հողի վրա:

Մի անգամ աշխատանիցից տուն վերադառնալու ձանալարին, մի համես, կավաշեն տան մոտ, որը հատկացված էր նահանգաղետական կառավարմանը, մեզ տրադատեց 8-10 տարեկան տղաների մի խումբ:

Նահանգաղետն ամենայն լրջությամբ ողջունեց տղաներին, հատկացված արժանավայել կեցվածք ընդունած հրամանաւարին և հարցրեց.

- Ի՞նչ կարող է անել հրամանատարը իր հավատարիմ բաղադացիների համար:

- Մենք եկել ենք մեր փայտյա հրացանները փոխելու իւկականներով: Մենք ուզում ենք դաշտանել մեր հայրենիքը:

- Մեզ մոտ գենի մեծ դահանջ կա, տղաներ,- ասաց նահանգապետը,- մենք գենի կտանի միայն նրանց, ովքեր կարող են հրամաններ կատարել դիրքերում:

Անմիջապես հետևեց դատախանը.

- Մենք դա կարող ենք անել:

- Եկեք տեսնենք, ի՞նչ կարող եք անել:

Տասներկուամյա առաջնորդը կտրուկ հրաման արձակեց, և խանութ փայտյա հրացան, կտրված թերև տախտակներից, խոլ ձայնով հովեցին սառած դեմքերին: Կատարվեցին «զենքը ուսին», «ուղղել սվինները» հրամանները: Ժղիսի սվեր անգամ չերևաց նրանց մանկական դեմքերին:

Հետո անմշակ կառվից կարված չարդիսներով (այնուև, ինչողեւ հողվածի հեղինակինն է), նրանի բարաւար բայլեցին առաջ ու հետ: Զինվորական ծառայության այդդիսի խաղը մեծահասակներին սփյուռն է ժղուալ, չնայած կոկորդի սեղմվում է դատերազմող մեծահասակների՝ մանկական այդ ընդօրինակումից:

Այդ երեխաների մեծ մասի հայրենին սղանել էին վերջերս, իսկ շատ մայրեւ ինքնասպանություն էին գործել՝ բողոքի դղություններին զոհ չգնալու համար:

Նահանգապետը խորապես հոգված էր:

- Ուրեմն եք ապրում,- հարցրեց նա, կարծելով, թե նրանի եկել են բաղադի մոտակա թաղամասից:

- Մենք եկել ենք Արտամետից,- լսվեց անսղասելի դատախանը:

Խոսրվ վեց մղոն հեռու, լճի ափին գտնվող գյուղի մասին էր, քուրքական դիրքերի ուղղությամբ: Մեկ օր առաջ սասիկ ձյուն էր եկել, հիմա արդեն սպերները երկարում էին: Նույնիսկ ուժեղ տղամարդու համար դժվար էր իրիկնաղահին վերադառնալ Արտամետ: Դրա համար էլ նահանգապետ Համբարձումյանը մեզ՝ երիտասարդ հրամանատարի հետ, հրավիրեց խորհրդի, տղաներին ուղարկեց գինվորական ընթրիք մի քաժին սև հաց և շաբանվագը: Նրանց ուղարկեց նաև բաղադային կայազրում զիշերելու տեղ:

Երեխաները հրաժարվեցին վերադառնալ՝ բանի դեռ չեն սացել հրացան:

Հումանիտար օգնությունը ոչ միայն սամոնսի հարց է, այլև բարոյականության: Առավոտյան իմ ավագ հյուսնը լա-

վագույն տախտակներից, որ մենք կարողացամ գտնել, դատարասեց քու, իհարկե աշխատելով նմանեցնել Սալադինի կեռ թին: Այդ ընթացքում երեխաները ծանոթացան սարքեր արտադրությունների, որ կազմակերպել էր ամերիկյան հումանիտար օգնությունը, նրանցից յուրաքանչյուրը սացավ մեկ զոյգ բրդյա զուլու: Այնուհետև տղաները զգաս շարժ կանգնեցին մեր տան տափակ կտորին: Այսեղ բաղադի երիտասարդ դարեւը՝ Հայաստանում հայտնի բանասեղծի որդին, ամենայն հանդիսավորությամբ դասակի հրամանատարին հանձնեց քուրը: Դրա փայտը չէր կարող քացնել այն գծերը, որոնք արցունին ու ժողովը աչքերին դատարասել էր հմուտ հյուսնը՝ ներդնելով իր հոգու ամբողջ կարողությունը:

- Այս անգամ մենք կարող ենք քու տալ միայն ձեր հրամանատարին, - ասաց նահանգապետը, որը քորել էր կարսու խորհրդաժողովը, որդեսզի հրաժեւ տա երեխաներին, - բայց ես ցանկանում եմ, որ դու լինեք կարգադի և տարունակել մարզվել, զուցե գա այն օրը, երբ ձեր օգնությունը մեզ հարկավոր լինի: Հրամանատար, ձեր միությունը դահեց կազմ ու դատարա վիճակում, որդեսզի մեր երկիրը կարողանա ձեզ կանչել հայրենիքի հանդեպ դարսը կատարելու:

- Մենք կիմենք դատարա, - դատախանեց նոր թի հյանք տիրակալը:

- Զգա՞ս: Շարժ, աջ դարձ, բայլով մարտ:

Եվ Արտամետի կամավորական բանակը հյանք ձամփա ընկավ դեղի իր հեռավոր գյուղը:

Ամիսներ անց քուրքական հորդաները եկան իրականացնելու Վանի կոտորածը:

## Թարգմ.՝ Նազելի ՍԱՐԳԱՐՅԱՆ

**Վանը քուրքերը գրավել են 1918-ի մարտ ամսին, հոդվածը պապովել է մեկ պարի անց՝ 1919-ի օգոստու ամսվա համարում:**

**Հողվածում հիշապակնող «քաղաքի պարեկը՝ Հայաստանում հայունի բանասրեղծի որդին», Վանի նահանգապետի քարտուղար Պարույր Լիպարիդյանն է, հայ մեծ աշուղ Զիվանու որդին:**

# Այս դասը, բարեկամներս, ե՞րբ ենի սովորելու

Եղիկ Անդրեասյան

**Վ**երջերս մեր խորհրդարանում մի հետաքրքիր իրադարձություն տեղի ունեցավ, որ, երեւի թե, պակաս աղմկոտ չէր, քան երեւանի քաղաքապետի ընտրությունը։ Բայց քանի որ մեր հասարակությունը ավելի շատ թամաշա անող է, քան դարդին դարման անող, այդպես էլ անհաղորդ մնաց այդ հետաքրքիր իրադարձության արձագանքներին, որոնք տեղ գտան որոշ թերթերում, ընդ որում՝ խիստ իշխանամետ ու կեղծ պետականամեծար։

Խոսենք ամեն ինչի մասին ըստ հերթականության եւ փորձենք հասկանալ հարցի կարեւորությունը, ավելի ճիշտ՝ վտանավորությունը թե մեր պետության եւ թե հասարակության համար։

Չվիճարկելով այն տեսակետը, որ ՀՀ նախագահի եւ մյուս պաշտոնական կայքերում ավելի քան ծիծաղելի կլինի գետեղել Հայաստանի Հանրապետության՝ մեր ցանկություններից բխող քարտեզներ, մենք այնուամենայնիվ ընդունելի չենք համարում այն մոտեցումները, թե առհասարակ եւ ոչ մի տեղ չպետք է ցուցադրենք ու տարածենք դրանք։ Ընդհակառակը, հստակ գիտակցելով Նախագահի կայքի կարգավիճակը, «սոլիդ դիտվելու» անհրաժեշտությունը, մեր

լրատվամիջոցներն ու հասարակական կազմակերպությունները, անկախ քաղաքական ներքին կողմնորոշումներից ու դիրքորոշումներից, պետք է օգտագործեն ամեն մի առիթ, միջազգային հանրությանն ու հենց մեր հասրակությանը ներկայացնելու այն ամենը, ինչ ձեռք է բերվել երկարատեւ եւ համառ պայքարի արդյունքում։ Յետեւաբար, նման հարցերում «ասպետական» կեցվածքները տեղին չեն, եւ, առավել եւս, ըստ իս, պետք է խսկական գիծ լինենք, որպեսզի այդ գործն ստանձնող մարդկանց գիծ անվանենք։

Պարզվում է, ըստ վերն ակնարկված թերթերի՝ այդպիսի «գժեր» են «Ժառանգություն» կուսակցության կին պատգամավորները, ովքեր Աժ-կառավարություն հարցուապատասխանի օրը խորհրդարանում տղամարդավարի պարզել են Հայաստանի եւ Արցախի միացյալ քարտեզը՝ ազատագրված տարածքներով հանդերձ։ Իսկ ի՞նչ էր մնում նրանց անելու, եթե պետությունն այդ ուղղությամբ ոչինչ չի անում։ Չվիճենք պետության հետ, բայց նրան զգուշացնենք, որ վերջերս ի հայտ են եկել որոշ լրատվամիջոցներ ու հեղինակներ, ով-

վելու եւ Հայաստան-Թուրքիա նորմալ փոխհարթերություններ հաստատելու հաշվարկների հիման վրա էլ գծվել է ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի քարտեզը, որ քաղաքական շրջանակներում հայտնի է որպես խաղաղարար կամ իրավարար՝ հաշվի առնելով Կուդրո Վիլսոնի իրավարար վճիռը։ Այդ քարտեզի պարզումն ու նրա պահանջների հետապնդումը եւս հայց կեղծ պետականամեծար թերթերի կարծիքով **գժություն է, Դաշնակցության մենաշնորհ հանդիսացող Հայ դատի պահանջ**։ Թե որքանով է Հայ դատը Դաշնակցության մենաշնորհ եւ ոչ թե հայ ժողովրդի դատ, մի առանձին քննարկման թեմա է, ինչին կանդրադառնաբ հետագա հրապարակումներում, իսկ առայժմ նշենք, որ ըստ այդ թերթերի՝ չպետք է նմանվել այն քազմաքիվ կազմակերպություններին ու քաղաքական ուժերին, որոնք Հայաստանը նույնիսկ չեն պատկերում քարտեզներում՝ այն ներկայացնելով որպես մասնատված մի հողակտոր՝ Ադրբեջանի, Վրաստանի եւ Երեւակայական քուրուտանի միջեւ։ Դրանից, մեկ է, Հայաստանի իսկական քարտեզը չի փոխվում՝ հանգստացնում են մեզ։

Մի առիթով տողերիս հեղինակը «Երկիր» թերթի էջերում տեղեկացրել է այն վայնասունի մասին, որ քարձրացել էր Ադրբեջանում՝ կապված հանրահայտ «Mikrosoft»-ի եւ գերմանական «Deutsche Welle» կայքի հրապարակած քարտեզների հետ, որոնցում ԼՂՀ-ն պատկերված է Հայաստանից բաժան եւ ԼՂԻՄ-ի սահմաններով։ Այս կապակցությամբ չքողարկված, հստակ կոչ է ուղղվել ադրբեջանցի ժողովրդին՝ նամակներով հեղեղել նշված կազմակերպությունների փոստն ու պահանջել Ղարաբաղը ջնջել քարտեզի վրայից։ Բացառված չե, որ Ադրբեջանի տեղեկատվական դաշտում իրենց շահերն ունեցող այդ երկու հսկա կորպորացիաները միառժմանակ տեղի տան, իսկ հետո ընդհանրապես մոռանան Ղարաբաղի մասին եւ սկսեն տարածել այնպիսի քարտեզներ, որոնք ակնահածո են միայն Ադրբեջանին։

**թեր նրա անունից սուտումուտ դոկտրիններ են հրապարակում։ Օրինակ, նրանք ասում են, թե ԼՂՀ ճանաչումը ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգից դուրս հարց է, իսկ Հայաստան-Արցախ միասնական քարտեզը՝ գժության արդյունք։**

Բոլոր օրակարգերից դուրս ապրող այս լուգրողի գլուխը պետք է գործուղել լիկեայան՝ գուցե թե հասկանա, որ չի կարելի պետության անունից հասարակության ուղեղը ցնդաբանությամբ լցնել։ Ում համար պարզ չէ, որ արտաքին քաղաքական օրակարգ ասվածը դոգմա չէ եւ հարափոփոխ է, ինչպես ինքը՝ արտաքին քաղաքականությունը։

Ինչպես երեւում է, դեռ ոմանք դասեր չեն քաղել հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական բանակցություններին հաջորդած իրադարձություններից։ Կույր պետք է լինել չնկատելու համար, որ Երեւանում գտնվող Գյուլը 180 աստիճանով տարբեր է Բաքու ժամանող Գյուլից, Սամկան Պետերբուրգի գեղեցկությունը վայելող Ալիեւը տարբեր է Բաքվի իր բնակարանում գիշերագօնստով ծեմող Ալիեւից։ Արի ու այսքանից հետո հասկացիր, թե որն է Թուրքիայի կամ Ադրբեջանի արտաքին քաղաքական օրակարգը։ Ալիեւն էլ, մեզ նման, գուցե իր նախագահական կայքում Ղարաբաղը պատկերում է ԼՂԻՄ-ի սահմաններով, բայց ադրբեջանական քարոզչական քարտեզներում Ղարաբաղի տեղն անգամ չի նշարվում, ել չենք խոսում տեղանունների աղավաղումների մասին։ Պարոն հայ լրագրող, ասա, խնդրեմ, ո՞րն է այսքանից հետո Ադրբեջանի արտաքին քաղաքական իսկական օրակարգը՝ Արցախի ինքնավարությունը, թե՝ Ադրբեջանի տարածքային անբողջականությունը։ Իհարկե երկրորդը, իհարկե հայերին ոչինչ չգիշելը, թեեւ հայերն արդեն իրենք են նշագծել ադրբեջանական կողմի զիջումների այն մինիմումը, որ անհրաժեշտ է Ղարաբաղի Հանրապետության անվտանգության համար։

Ի դեպ, ճիշտ նույն տրամաբանությամբ, այսինքն՝ Հայաստանի անվտանգությունն ապահո-

Նման անհերեթ քարտեզներն, այնուամենայնիվ, երբ ողողում են ինֆորմացիոն դաշտը, դառնում են «ճանաչելի» եւ ավելի է դժվարանում միջազգային հանրությանը հակառակն ապացուցելը:

Ազգային ուժերին, սակայն, չգիտես ինչու, մեր իշխանություններն իրենց խոսափողը հանդիսացող որոշ թերթերով **գիծ** են անվանում, երբ նրանք պահանջում են քարտեզի վրա պատկերել իրականությունը: Այնպես են սարսափեցնում, ասես մեր երկիրն իրոք օկուպանտ է եւ գիշերով զավթել է հարեւանի տարածքը, ասես չի եղել արցախյան ազատամարտ ու Շուշիի ազատագրում, ասես չի եղել Սելրի դաշնագիր եւ որպես դրա հետեւանք՝ վիլսոնյան իրավարար վճիռ ու Վիլսոնի կնիքով վավերացված քարտեզ:

Դատելով մեր իշխանամետ թերթերի հրապարակումներից, այս ամենի մասին խոսել չի կարելի, քանի որ դրանք չեն տեղափորվում մեր արտաքին քաղաքականության օրակարգի մեջ: Այդ դեպքում ո՞րն է մեր օրակարգը, ընդ որում՝ խևական օրակարգը եւ Գյուլի ու Ալիելի համար նախատեսված օրակարգը, որոնք, եթե համարայլ գնանք ժամանակակից միջազգային քաղաքականությանը, պետք է գոյություն ունենան միմյանց գուգահեռ:

Եթե ուշադիր հետեւենք մեր իշխանությունների միջազգային բեմերում արած հայտարարություններին եւ դրանք համեմատենք բանակցող մյուս կողմի, ասենք՝ Ադրբեյջանի հայտարարությունների հետ, կտեսնենք, որ ձգտումները գրեթե նույնն են՝ խաղաղություն, բանակցային գործնթացի շարունակում, համատեղ լուծումների փնտրությունը եւ այլն: Նույնիսկ տպավորություն է ստեղծվում, թե ամեն ինչ իր հունով է ընթանում, եւ հարցի լուծումը վաղը չէ մյուս օրվա խնդիր է: Սակայն հրաժեշտի ձեռքսեղմումից վայրելյաններ անց, դեռևս բարեկամական ընթրիքի մնացորդը չծամած, մեզ հետ բանակցող կողմն իր մայրաքաղաքում մեջտեղ է հանում խևական օրակարգը, ու մնում ես զարմացած, թե ում հետ ես գործ ունեցել: Այս դասը, բարեկամներս, ե՞րբ ենք սովորելու, մինչեւ ե՞րբ ենք տա-

նը պատահող ամեն ինչի մասին երեխայի պարզամտությամբ պատմելու օտարներին: Գիտեք, չե, թե ինչպես է օտարը ծիծաղում նման դեպքերում:

Նորից դառնանք քարտեզի խնդրին: Ոչ ոք չի վիճում պետական մակարդակով արտաքին քաղաքական որոշումներ կայացնելու ժամանակացույցի շուրջ: Դա ՀՀ նախազահի, Ազգային ժողովի որոշելիքն է: Պետության շահերից ելնելով՝ նրանց որոշելիքն է՝ ինչ խոսել փակ դռների հետեւում, ում կողքը նատել ընթրիքի սեղանի շուրջ, կամ ում «աչքով անել» բանակցությունների պահին: Բայց մեր՝ հայերիս իրավունքն է հանդես գալ իրեւ կազմակերպված, ազգային շահը գիտակցող հասարակություն, եւ մեր հավաքական կարծիքով ազդել արտաքին քաղաքական օրակարգերի վրա: Ի՞նչն է, օրինակ, մեզ խանգարում երեւանի եւ հանրապետության մյուս քաղաքների տրանսպորտային կանգառներում, տվյալ քաղաքի հատակագծի կողքին կախել նաեւ այն քարտեզը, որ Ազգային ժողովում պարզել են պատգամավորները, ի՞նչն է խանգարում մեր հեռուստաալիքներին հենց այդ քարտեզի ցուցադրմամբ մեզ եւ ժամանակավորապես Հայաստանում գտնվող օտարերկրացիներին տեղեկացնել եղանակի մահին: Վերջապես ի՞նչ կատահի հանկարծ, որ թուրքական լողափերը գովազդող մեծադիր վահանակների փոխարեն, Վիկ Դարչինյանի՝ «Իմ զենքը իմ բռունքըն է» մեծադիր նկարի հարեւանությամբ տեղադրվի վիլսոնյան քարտեզը՝ «Իմ զենքը արդարությունն է» մակագրությամբ:

Խևական օրակարգը, ինչպես տեսնում ենք, այնքան էլ դժվար բան չէ, իսկ նրա իրականացումը ոչ թե գժություն, այլ ընդամենը համոզմունք է ու կամք: Մենք պետք է լինենք այդ համոզմունքի եւ կամքի հասարակությունը: Եվ որքան ներսում «իշխանամետները» սաստեն այդ կամքը դրսեւողներին, այնքան մեր իշխանությունների վրա կուտեղանա արտաքին ճնշումը, ինչի հետեւանքով՝ եզակի օրակարգի գործած ավերները կարող են անդառնալի լինել:

№ 6 (203)

XIX ՏԱՐԻ

*"Droschak"*  
ORGANE  
de la Fédération  
Révolut. Arménienne.

ՀՐՈՅԻԿ  
“ՀՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱՂԵԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԴԵԿ

ՅՈՒՆԻՍ

ADR

RÉDACTION

„DROS

GENÈV

## Արքուն

Կ ովկասից մեզ մօտ ստացած նամակները երբեմն յորեւէն շեշտեր են պարունակում, որ նմանում են ահազանգի... Հայակերների ու պրօվոկատորների վատթարագոյն տեսակը, որ ամբարտաւան զլուխ է բարձրացրել րէակցիայի ներկայ օրերին՝ սպառնում է թերևս նոր Բարդուղիմէուեան գիշերներ ընծայել դժբախտ ու արինաքամ Անդրկովկասին: Անհնարին և անհերեք ոչինչ չըկայ այդ սոսկալի հիպօթեզի մէջ: Հայ ինտելիգենցիայի դէմ սկսած պօգրօմը, հակահայկական անլուր արշաւանքը, որ մղում է մի տարուց ի վեր քաղաքների և գաւառների մէջ, հայ ժողովրդի զինաքափութիւ-

նը, անտարակոյս, քաջալերել են միջազգային պրօֆեսիօնալ գրգռիչներին, որոնք տապալած համարելով իրենց ահարկու հակառակորդին - հայ ժողովրդական կազմակերպութիւնը - որոճում են թերևս նոր հայասպան ծրագիրներ... Հողը նրանց համար տակաւին պարարտ ու հիւրընկալ է, տարաբախտաբար... Հին, մրափող ատելութիւններ, խուլ, ոռնացող վրէժխնդրութիւն, թալանի ու սպանութեան ախորժակներ... այդ բոլորը դեռ կայ առատօրէն կովկասեան դժբախտ միջավայրում: Կարմիր խենթութեան ուրականը դեռ գուցէ չի ասել իր վերջին խօսքը: Եւ հարկ կա՞յ շեշտելու, որ այդ խօսքը մահու ու աւերածի շանթեր պիտի ժայթքէ դարձեալ հայ ժողովրդի հասցէին. հարկ կա՞յ յիշելու, որ պրօվոկատօրական, յար-

ձակողական ախորժակները պատրաստ են կատարել իրենց վայրենի ապօթեօքը, դարձեալ հայկական աւերակների վրայ...

Չը մարգարէանանք: Յոռեւէն ահազանգերով չը յուղենք մթնոլորտը: Շատ չը խօսենք, քայց շատ մտածենք: Չ'ասենք «անհնարին» է և թերևսամիտ ու յանցագործ լաւատեսութեամբ չ'անգիտանանք մեր մշտնջենաւոր հսկողութեան պարտաւորութիւնը: Մեր անիծապարտ իրականութեան մէջ բոլոր «անկարելիութիւնները» դառնում են կարելի - և դժնդակ անակնկալներին դիմագրաւելու միակ միջոցն է՝ արթուն լինել միշտ, շրջահայեաց ու պատրաստ լինել...

Գրիգոր ԶԱՆԻԿԱՆԸ արձակագիր է, հրապարակախոս, թարգմանիչ: Ծնվել է Բուլղարիայում: Ավարտել է Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների լեզվագիտական համալսարանը, Ս. Գորկու անվան գրականության ինստիտուտի գրական բարձրագույն դասընթացները, ապա՝ ֆրանսերենի իր իմացությունը կատարելագործել Ֆրանսիայի մշակույթի եւ քաղաքականության նախարարությանը կից հաստատություններում:

Իր գրական-գեղարվեստական եւ հրապարակախոսական ստեղծագործությունների համար արժանացել է «Գարուն» (Երևան), «Ավրորա» (Սանկտ Պետերբուրգ), «Դրուժբա նարոդով» (Մոսկվա) ամսագրերի, «Գրական թերթ», «Հայ զինվոր» պարբերաթերթերի, ՅՅ պաշտպանության նախարարության տարվա լավագույն հրապարակման, ինչպես նաև «Գրականություն պատաճիներին», «Հրանտ եւ Մանուշակ Սիմոնյան» գրական հիմնադրամի մրցանակներին: «Մահապարտները» գրքի համար ստացել է Հայաստանի գրողների միության տարվա (2002 թ.) լավագույն հրապարակախոսական գրքի մրցանակը: Հայաստանի լրագրողների միության «Ուկե գրիչ» մրցանակի դափնեկիր է:

Գրիգոր Զանիկյանի «Եռաբլուր (Վիպական դիմաշար)» գրքույկը, որ ներկայացվում է ստորեւ, արժանացել է «Հայը 21-րդ դարասկզբին» մրցանակին:

**Մ**րցախյան հերոսամարտը հայ ազգային-ազատագրական դայ-  
ֆարի մյուս էջերի նման, վերածվեց փառաղանծ հաղթանակ-  
ների ու ցավալի դարտությունների, սիրեցյալների դառը կորս-  
տի ու բազում հերոսների ծնունդն ավետող մի վիղասի, որի դեմքերն ու  
դեմքերը առանձնակի ուսադրության առարկան են մեր ժամանակագիր-  
ների: Ու թեև այդ հերոսամարտի ամենահանգուցային կետում ենք  
կանգնած այսօր, նրա սկզբնավորման, մարտական ընթացքների, այդ  
ընթացքներին թև ու ոգի սկած հայորդիների սիրանին արժենուելը բոլո-  
րովին էլ ժամանակավետ չէ: Ավելին, ձիւս ժամանակն է այդ անելու,  
որմեսզի հանգուցակետից այն կողմ արվող բայլերը լինեն դայֆարին  
համահունչ, այս վիղասի հերոսների դիմանկարներին արժանի: Ար-  
ձակագիր, հրադարակախոս և քարգմանիչ Գրիգոր Զանիկյանի «Ե-  
ռաբլուր (Վիպական դիմաշար)» գիրքն այս առումով բացառություն չի  
կազմում:

Ասել, թե այս դիմաշարով հեղինակը փորձել է լրացնել Արցախյան


Գրիգոր Զանիկյան

Եռաբլուր (Վիպական դիմաշար),  
Երևան, ՀԳՄ Խրամակչություն, 2008,  
320 էջ:

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿՅԱՆ

Եռաբլուր

«Մաղմոս ասացեք, սաղմոս ասացեք...»:  
ՍԱՂՄ. ԽԵ-6



հերոսամարտի դեռևս սղիսակ մնացած էջերը, կնօւանակի ավելորդ ժնորհներ անել Գրիգոր Զանիկյանին, որոնց կարիքը նա չունի: Բայց դարտավոր ենք ընդգծել այն frsնաջան աշխատանքը, որ հեղինակը ներդրել է մեր նորագույն վիդասի հերոսների կերպարներն ամբողջականացնելու, նրանց մարդկային նկարագիրն առավել զունավորելու, նրանց խոսքն առավել հնչեղ դարձնելու, մի խոսքով՝ նրանց դիմանկարների վրա վերջնական վրձնահարվածները կատարելու ուղղությամբ: Հերոսների՝ դասերազմից դուրս կյանքի մանրամասները, հաճախ նոյնիսկ առանձին հոգսերը այն դժվարինն ու էականն են երթեմն, որ դակասում են նրանց վեհ դիմագծերում: Այդ դժվարինի և էականի վերականգնմանն է միտքած «Եռաբլուր»:

Գրքում նկատելի է հերոսության հատկանիւնների փոխանցելիության գաղափարը: Կրտսերը հերոսանալ սովորում է տարիքն առնող հայդուկամետից, և դա նոյնին բնական է, որքան ջրի՝ հողի մեջ միշտ ներծծվելը և այդ հողի սված ծիլերի վեր խոյանալը: Որքան էլ Շահեն Մեղրյանը դասմախուց դնի, սաստի ու համառորեն իր կողքին մնալու դասզամ սա իր եղբորորդի Հայկին, միևնույն է, բնականն այն է, որ այս Հայկը գիշերվա բողի սակ, հայդուկամետ հորեղբորից քափուն, հասնի հակառակորդի դիրքին ու ականաղատի նրա առաջխաղացման հնարավոր ձանաղարիը: Հայկ, Հայկ, այնուամենայնիվ, վերջում, լսեցիր հորեղբորդ հորդորն ու նրա կողքին ես Եռաբլուրում:

Սա «Եռաբլուրի» սրառուչ դասմություններից մեկն է միայն: Գրիգոր Զանիկյանը ոգեղեն մի ցուցաւրահ է բացել իր գրքով, որտեղ գտնվելու, դիմանկարների առջև իր ժաղցր հիւղություններով ծանրաբեռնված կանգ առնելու և իր հիւղություններին մի նոր հույս ավելացնելու երջանիկ դասեհությունն ունի հայ ընթերցողը: Նման մի դասկերարակում էլ, թերևս, շատ ավելի հետև են սերտվում շատ սովորական քվացող ձեմարտությունները, որոնցից հեռացել և, ավագ, հեռանում է հայ մարդը. «Հայ ծնված լինելուց ավելի մեծ երջանկություն կարելի՞ է երազել: Ծնվել ու գիտակցել, որ ֆոնն է Գրիգոր Լուսավորչի խաչը, Մատուցի երկնառավ գրերը, նաև՝ Դավթի Թուր Կեծակին: Թուր Կեծակին վիդասի ծննդաբարությունը չէ, թրկաղումդ է, օրհասի դահին հանելու ես դասյանից, գրոհելու ես ոսխի վրա, որ դասմանես Գրիգոր Լուսավորչի խաչը, Մատուցի երկնառավ գրերը, հայ լինելու քանի երջանկությունը:»

Եթե հավատաս այս ձեմարտությանը, անդայման կհաղթես»:

Էղիկ Անդրեասյան


## Նինա Հայ-Արժյան




Նինա Հայ-Արժյանը կրությամբ նկարիչնձարան է, ավարտել է Մոսկովյան Տեխնիկական ակադեմիան: Աշխատել է հանրահայք Իրինա Պոնարովսկայայի արվեստանոցում, որտես զլիավոր դիզայներ: Ըստ տունվ, սակայն, նա հասկանում է, որ մոդելների աշխատանքը իրենը չէ եւ ընտրում է ազատությունը, ձեռք է առնում լուսանկարչական սարքը:

«Մեզ ուղարկածող աշխարհը,- ասում է նա, - զարմանալի է եւ գեղեցիկ: Մենք հաճախ ենք այսպես արտահայտվում, սակայն մոռանում ենք, որ դրանք սույն քառեր չեն, այլ իրողություն: Իսկ ավելի հաճախ առօրյայի ծուղակն ընկած, դարզադես դադարում ենք զարմանալ աշխարհով եւ վաղորոնք իմանալով, թէ ինչ ակնկալիք ենք ունենալու այս կամ այն իրադրությունից, մեր աչքերը, որոնք հլու հնազանդ են բանականությանը, ցուցադրում են սույն մեր սպասելիքները: Սակայն բավական է ազատագրվել «գիտելիքից», նայել ամեն ինչին այնպես, ինչպես առաջին անգամ, եւ անսահման բանակով նոր, զարմանահրաւ դատկերներ կհայտնվեն ամեն ակնթարքին: Այս վիճակին հասնելու համար, հարկավոր է բացել աչքերը եւ մոռանալ այն ամենը, ինչ գիտես»:







ЯРОСЛ

